ԱԼԻՍԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

ԵՐԵՎԱՆ «ՎՄՎ-ՊՐԻՆՏ»
2021

ՀՏԴ 821.19-1 Բաղդասարյան
ԳՄԴ 84(5Հ)-5
Բ 242

Բաղդասարյան Ալիսա
Բ 242 Պատերազմից հետո: Բանաստեղծություններ/
Ալիսա Բաղդասարյան.- Եր.: ՎՄՎ-Պրինտ, 2021.- 128 էջ:

ՀՏԴ 821.19-1 Բաղդասարյան
ԳՄԴ 84(5Հ)-5

ISBN 978-9939-60-655-2
© Բաղդասարյան Ա., 2021

ԹԵՎԱՎՈՐ ՊՈԵԶԻԱ

Ալիսա Բաղդասարյանը հանդես է գալիս բանաստեղծական նոր գրքով, որը կրում է «Պատերազմից հետո» վերնագիրը: Մինչև այս ժողովածուն նա ընթերցողի սեղանին է դրել «Խոտի աղերսանք», «Թիթեռախաղ», «Հայացքի մերկություն» և «Գրիչս երազ է տեսնում» երգերի փնջերը, որոնց բույրն ազդարարել է Ալիսայի ստեղծագործական գարնանային շունչը, ընթերցողի սիրտը շոյելու Աստվածանվեր կարողությունը:

Երկրորդ, երրորդ անգամ վերընթերցելով այս նոր գիրքը, գեղագիտական հաճույքի հրամայականով, սրտացավ բարեկամի զգացողությամբ շշնջացի. «Ապրես, Ալիսա, հիրավի, դու քո ընթերցողի սրտի հետ ես զրուցում»:

Ի դեպ, նշեմ, որ ամեն մի բանաստեղծ չէ, որ դառնում է ընթերցողի սրտի թարգմանը: Այո՛, գրում են, հրատարակում, սակայն անցնում են ընթերցողի սրտի կողքով՝ անտարբեր, սառնասիրտ:

Մեծն Վիլյամ Սարոյանին գրաքննադատները մի անգամ հարցրել են՝ երիտասարդական պոեզիային հետևո՞ւմ է, թե՞ ոչ: Նա պատասխանել է, որ ինքն ուշադիր կարդում է տպագրված համարյա բոլոր գրքերը: Պոետական արվեստի առումով ամեն ինչ իր տեղում է, միայն մի բան է պակասում՝ սիրտը:

Համաշխարհային գրականության բոլոր դասականները խորհուրդ են տվել՝ գրելիս չմոռանալ Մարդու սիրտը, քանզի Սիրտ ասելով, առաջին հերթին հենց նկատի է առնվում Մարդը՝ հարուստ ներաշխարհով:

Ավելորդ չեմ համարում այստեղ բերել անմահ Չարենցի հետևյալ խորհուրդները.

Երգը այնժամ է միայն քերթողից իր և դարից իր անցնում,
Երբ առնչվում է կյանքին հուր միջուկով իր անանց…

Կամ

Սեր, և պայքար, և՛ քնար,- միասին եք դուք, միասին եք…

Կարդալով Ալիսայի երգերը, համոզվում ես, որ նա իր քնարական երգերում հոլովում է և պայքար, և՛ սեր, որոնք առնչվում են «կյանքի հուր միջուկին»:

Ժողովածուում լուսաբանված թեմաները վերցված են կյանքից, կոնկրետ մեր օրերի եռքից: Բայց այստեղ մի շատ կարևոր հիմնախնդիր ծիկրակում է պոետական աշխարհի բազմաբնույթ շերտերից՝ ներկայացնելով բանաստեղծի մտածողության պատկերավորության և այն ափամեջ դնելու պահանջը:

Շտապեմ նշել, որ Ալիսան ծնվել է բանաստեղծական երանգների հյուսվածքով, որպես սրտի թարգման, որպես Աստծո քարտուղար:

Գրքի շարքերում, որ կրում են «Քեզ տեսնելիս երգում են հոգուս աչքերը», «Առանց քեզ՝ երկնքի կապույտն էլ անգույն է» և «Պատերազմ պատերազմից հետո» խորագրերը, արտացոլված են մեր ժողովրդի ճակատագրի մերօրյա հատվածը, հայ մարդու հարուստ ներաշխարհը: Եվ գոհունակությամբ ընդգծեմ, որ Ալիսայի բանաստեղծական պատկերավոր խոսքն իրենն է, իրենն են հյուսվող գորգի բոլոր նուրբ-մետաքսե-բազմերանգ թելերը: Իր երգերում Ալիսան ինքն է՝ խոհերի ջերմությամբ, պատկերների թարմությամբ, ժամանակակիցների երազանքով, ամբողջության մեջ՝ հայաշունչ-հայապատկեր հյուսվածքներով:

Ճակատային - վերամբարձ ճիչեր չկան նրա երգերում: Գրքի հենց առաջին էջերում Ալիսան է՝ որպես քնարական հերոսուհի, որպես սիրող կին, սրտացավ քույր, տագնապած մայր, որը բոլո-

րի անունից շշնջում է. «Պատերազմն ինձնից խլում է քեզ… Իսկ արյան շիթերը շարունակ հայրենիք են նկարում»:

Իր ժողովրդի դուստրն է Ալիսան՝ խաղաղատենչ, արարող, լավատես, հաղթանակող.

Բայց, երբ պատերազմը
պարտադրանք է դառնում՝
Հայրենիքս քո դեմքն է ստանում,
և ես, քեզանից խլում եմ ինձ,
Որ հայրենիքս հաղթանակ տանի:

Ալիսա Բաղդասարյանը հայրենասիրություն չի խաղում, չի ճչում, որ մենք քաջասիրտ ենք, հայրենապաշտ: Նա իր արցունքները խառնելով ազգի արցունքներին, ընկնում է նրա գիրկն ու երդվում.

Միտքս անկումներից
վեր է
բարձրանում,
Իսկ հաղթանակս՝
բարձրանալ-կանգնելն է:
Գրկիր ինձ,
Քո գիրկը ոգով զինելու
մեծ հատկություն
ունի:

Բանաստեղծուհի Ալիսան պատերազմից-պատերազմ, ցավից-հույս, մաքառումից- գալիք քայլող ժողովրդի անձնուրաց դուստրն է, որը Ռուզանի ու Գայանեի ոգով կոփված, չխուսափելով ճշմարտությունից, հայտարարում է.

Արցախում
Կռիվ-կռիվը դարձել է
սերնդափոխության
կարևոր նախապայման,
Հայրերը
զավակներին
ինչքի փոխարեն
Պայքարի ոգի են կտակում:

Նման օրինակները խոսուն են, կենսափիլիսոփայական ընդհանրացումներով համեմված, մեկը մյուսից խորիմաստ, մեկը մյուսին լրացնող պատկերներով թևածող: Առած-ասացվածքի հասնող մտքերից բերեմ մի շարք օրինակներ. «Աստծո օրհնանքը պետք է այն մորը, ում ձայնից խլանում է երկինքը, այն հորը, ում լռությունից ճաքում է հողը», «Հողը բուռ-բուռ լցվել է մեր երակները», «Հիշողությունը դրոշմվել է ներկայի հայացքի մեջ», «Կյանքն ու մահը գրկել են իրար», «Հայրենիք, ես այն մանուկն եմ, ով քո երակների միջով հոսող արյամբ է սնվում» և այլն, և այլն:

Ալիսան ժամանակի կորուստների ցավը զգացող, մայրական զգացումներն աշխարհին տանող գեղագետ է: Նա մատը դնում է իր հայրենապաշտ ընթերցողի ցաված սրտին և առանց վարանելու բարձրաձայնում.

Հողն արյունածոր
կարմիրով է ներկել օդը,
Սիրտ չմնաց.
Կորուստների ցավից
մեռնում է ժամանակը:

Այսչափ փոքրիկ հողակտորում
Այսքան շատ գերեզմաններ
ինչպե՞ս են տեղավորվում:

Ալիսայի սույն գրքի առյուծի բաժինը սիրո երգերն են: Որպես սիրերգակ նա գալիս է դարերի խորքից: Նրա ուղին սկիզբ է առնում Կոստանդին Երզնկացուց (13-րդ դար), հասնում Նահապետ Քուչակին (16-րդ դար), նոր թռիչք առնում Սայաթ-Նովայից (18-րդ դար): Ապա ունկնդրում է Վահան Տերյանին, Չարենցին, Պարույր Սևակին ու Սիլվա Կապուտիկյանին, իրեն ներկայացնում որպես նրանց ժառանգորդ դուստրը, որի համար սերը հավատարմության, օջախապաշտության, ազգային արժանապատվության, խիզախության, երեխաների դաստիարակության սուրբ թթխմորն է, սերուցքը, պատիվը: Սիրային երգերում նա չի քարոզում, նրա գեղագիտական իդեալն ընթերցողը կարդում է երգերի ենթաբնագրային արծարծումներում, դրամատիկ ապրումների հոլովումներում: Նա հայկական սուրբ օջախների գեղեցիկ սովորությունների, ավանդույթների նորօրյա խորհրդատուն է: Այդ դիտարկումի բանաստեղծական փայլուն օրինակները շատ են:

Ալիսայի դիտարկմամբ «Սերը հայտնվում է անսպասելի»: Դեռ ավելին: Նա խոստովանում է, որ ինքն օդի մեջ անգամ զգում է իր սիրած էակի ներկայությունը, և դեմքն այրվում է նրա ջերմությունից: Ալիսայի քնարական հերոսուհին զգացմունքների տարափից հոգեցունց ապրումներ է ունենում և ուզում է հպվել սիրո շուրթերին, զգալ շնչառությունը, լռել, չխոսել, դրանով իսկ լռությամբ արտահայտել ամենակարևորը:

Սիրո աստվածանվեր զգացումները ճառագում են հաճախ կարոտի ու տառապանքի խարույկից: Ահա վառող ապրումի մի օրինակ.

Քեզ մոռանալու փորձերս
Ինձ բերում հասցնում են
ուղիղ քո գիրկը.
Թռչունն այնքան մոտ է երկնքին,
Որ կապույտը շոյում է նրա թևերը,
Երևակայության մեջ
Երկնքի բոլոր աստղերը
մեր գրկում են:

Ալիսան ընդունում է լռության մեջ հոլովվող սիրո խոսքերը, թևավորվում, երբ սիրած էակի հայացքի մեջ տեսնում է սեր, խոնարհում: Սակայն ծանր ապրումներ է ունենում, երբ պահվածքն ու զգացածը հակասում են միմյանց, այդ պահին «Կրակներն անշունչ ընկնում են» աչքերի մեջ և սպառվում է՝ առանց նրա:

Սիրերգակ Ալիսա Բաղդասարյանի համար սերը կարոտ է, ապրումների սարսափի դեմ «միակ դեղահաբը»: Դիմելով սիրուն, նա խոստովանում է.

Առանց քեզ՝
ամեն ինչ գունազրկվում է,
Զգում եմ տարածության մեջ
շնչասպառ երամների անկումը,
Որոնք գժվեցնող կարոտից
Ընկնում են
սառցակալ քարերի գիրկը.
Ամեն ինչ անհուսալի ցավոտ է՝
Առանց քեզ:

Ալիսայի սիրային երգերը զետեղված են «Առանց քեզ՝ երկնքի կապույտն էլ անգույն է», «Քեզ տեսնելիս երգում են հոգուս աչքերը» շարքերում: Սիրո հանդիպման երջանիկ պահերին լինի, թե հեռավոր կարոտի թևերին, համբույրներից ջերմացած օրերում լինի, թե խռովքի թեժ հնոցում, Ալիսան բոլոր աստվածահաճո սիրողների անունից ասում է.

Դու մի նոր երանգ մտցրիր
իմ կյանք.
Սրտի դող,
Ժպիտ,
Մտքի հրճվանք...

Իսկ սիրո ծիածանի փայլատակումի մի ուրիշ հատվածում հնչում է նրա սիրո բերկրանքը.

Համաձայնվիր՝
Իմ ու քո կյանքը
Մի լավ բան մտավ,
Տառապանքի մեջ
Նիրհած իմաստությունն
Արթնացրեց մեզ,
Եվ ասաց՝ ապրելը այս է,
Ահա այսպես...

Անվանի գրող Մկրտիչ Արմենը մի առիթով գրել է, որ դժվար է պատմել քնարական բանաստեղծությունը, այն ըմբոշխնել է պետք:

Ալիսայի քնարաշունչ երգերը, որպես մեր արդի սիրերգության նմուշներ, գալիս են կրկին ու կրկին ասելու մեր ժողովրդի թևավոր խոհն ու դասը. «*Սերը կյանք է, կյանքը՝ սեր*»:

Բարի ճամփա եմ մաղթում նման երգափնջին և հավաստում, որ ընթերցողներն այն դարձնելու են սեղանի բուրումնավետ զարդ:

ՍՈԿՐԱՏ ԽԱՆՅԱՆ

բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՔԵԶ ՏԵՄՆԵԼԻՍ
ԵՐԳՈՒՄ ԵՆ ՀՈԳՈՒՍ ԱՉՔԵՐԸ

*

Սերը մտնում է հոգիներն
Ու արև նկարում,
Մեր հոգու այգում
սիրով է աճում ամեն ինչ.
խոտը,
ծաղիկը,
բերքը,
Ադամն ու Եվան այգում են.

Նրանց համտեսած խնձորն
Ամեն սիրահար նորից է փորձում:

*

Տար ինձ
Աշխարհից հեռու,
Այնտեղ կպատմես
Մատներիդ երազները,
Շուրթերովդ կնկարես
Քո՝ ինձ նվիրած արևը,

Բառերը օդում կճախրեն,
Իսկ մենք
Փակ աչքերով կորսանք
Նրանց ճախրանքը,
Եվ մեր թռիչքը՝
Անեզր, անսահման...
Կտանի մեզ

Ամեն ինչից
Եվ ամենքից հեռու...

Աշխարհից դուրս:

Մեկնիր ձեռքերդ,
Շոյիր երազանքիս վարսերը,
Գրկիր նրա գունազարդ մարմինը,
Եվ ցույց տուր
Քո՝ ինձ նվիրած
Աստղազարդ երկինքը:

*

Դու մի նոր երանգ մտցրիր
Իմ կյանք.
Սրտի դող,
Ժպիտ,
Մտքի հրճվանք,
Մի նոր պատրանք
Դու հյուսեցիր.
«Ուզում եմ հավերժ լինել
Քեզ հետ,
Քեզ մոտ
Քեզնով անպարտ»,
Բառեր,
Որ ասվել ու կրկնվել են
Շարունակ,
Ինձ համար դարձել են
Նոր, չկրկնված.
Բառեր լոկ ինձ համար ասված:

*

Քո համբույրներից
Գեղեցկանում են շուրթերս,

Դու ամենուր ես.
Արագացված շնչառությանս
Եվ սրտիս դողի մեջ,

Միտքս՝ քեզնով պարուրված,
Հրճվանք,
Կսկիծ,
Կասկած,
Ամեն ինչ խառնում է,

Եվ ինչ գեղեցիկ է
Անհանգստությունս:

*

Բառերն անզոր են,
Երբ խոսում են հայացքները.
Լռությունից ծնված
Տարածությունն անէանում է,

Շունչս երազում է
քո շուրթերին հպված.
Ճանապարհները
ձգվում են երկար,
Կարմիր,
Կապույտ,

Ծիրանագույն մտքերը
Ներկում են մեր հայացքները.

Բառերը հզո՞ր են,
Երբ հայացքները կրում են դիմակ:

*
Կարոտի ցավը սեղմում է
Հոգուդ աչքերը,
Տեսնել,
լսել,
զգալ.
Այս է պահի ամենապահանջված
Պատրանքը:

Հոգուդ տխրամած հայացքում
Աչքերիդ արցունքներն են,
Որ զսպում ես, սեղմում,
սեղմվում,
Դժվարանում եմ
Նայել աչքերիդ խորքը,
Կողքիդ չլինելու
մեղքի զգացողությունս
Շնչասպառ աղոթում է
Ներելու խնդրանքով:

Աչքերդ
Զգուշորեն
Մաքրում եմ արցունքներից,
Եվ ափիս մեջ շոյում կոպերդ,

Ներիր, որ հեռու եմ
Եվ տարածության մեջ եմ
Փայփայում արցունքներիդ
տաք շունչը,
Որն այրում է ձեռքերս
Ցավեցնելու աստիճան՝
Անզուսպ, անպաշտպան,
շատ քաղցր:

Ներիր, որ քեզ հետ չէի:

*

Իմ կարոտը
Դուռ է բացում,
Քո զգացմունքը
Ներս է մտնում
Գլխաբաց,
և պատմում է
մի նոր հեքիաթ՝
ինձ ու քեզ համար
ազդօրինակ,
նոր ու թարմ
իմ կարոտը
լույս է բացում.

ես մտնում եմ
քո աշխարհը,
վերադարձնում
քո ժպիտը,
և զրնգուն ծիծաղից՝

մի նոր կյանք ենք
մենք նկարում՝

իրար շատ մոտ,
իրարից այնքան հեռու:

*
«Դու հավերժ իմն ես».
Բառերիդ մեջ
Հավերժությունն
Իմաստավորվում է,
և բառերը դադարում են
զուտ բառեր լինել,
ոգի է ստանում խոսքը,
թևավորվում է միտքը,
արժեզրկվում՝ մինչ այդ հնչած
ցանկացած խոստովանություն,

Քո բառերի մեջ
ես գտնում եմ քեզ,
և քո աշխարհը դառնում է իմը,

քո՝ իմ ձայնով լցված
տարածությունը
մտնում է իմ
պարունակության մեջ,
և, ինչպես
ես՝ քոնը,
այնպես էլ՝ դու
իմն ես դառնում,

և ամեն ինչ,
և ամեն ոք
դադարում են
գոյություն ունենալ մեր շուրջը:

*

Դու ես արևը, լուսինը,
Շաբաթվա բոլոր օրերը,
Ու նաև՝ գարունը.

Ծառը բողբոջում
և պահի տակ ծաղիկ է դառնում,
Օրերը բացվում են՝
Աշխարհի բոլոր բողբոջներն
Իրենց մեջ պարուրած.

Գրկել եմ արևը, լուսինը,
Շաբաթվա բոլոր եղանակները.

Այսօր և միշտ գարուն է:

*

Երբ տեսա քեզ՝
ժպիտն արև նկարեց,
Եվ լուսավառ դեմքս
Դեպի քեզ ձգվեց,
Վարդաթուփը
Պահի մեջ կանաչեց,
Կոկոն դարձավ ու բացվեց:
Անկրկնելի սիրուն էր:

*

Քեզնով ներծծված կարոտս
Կատաղի թափով
Ներխուժել և գրավել է
Մտքիս բոլոր ծալքերը

Անունդ լեզվիս վրա
Դառել է միակ համեմունքը

Այլ հավելումների
Անհրաժեշտություն
Ասես այլևս չկա

Քեզնով է պայմանավորված
Շնչառությանս սառն ու տաքը

Հեռավորության ցրտից երբեմն
Մրսում է լեզուս
Եվ սառչում են
իմ քեզնով գուրգուրված
տաք-տաք
հուշերը:

*

Քո բացակայությունը
Իմ տխրության հյութն է,
Ու ես սիրում եմ
Իմ տխրությունը:

Հիշողությանս
աչքերի առաջ
Քո ձայնն է տարածել ձեռքերդ,
Գրկել ես միտքս,
Եվ պարուրել շունչս
Քո ջերմությամբ.
Երևակայությունս
անցել է իրականության
բոլոր սահմանները,
Նորից արևի աչքերը
Ժպտում են
Ձյունածածկ վերմակի տակից,
Ձնծաղիկների բույրից
Գլխապտույտ են
ունենում մտքերս,
Քո ներկայությունը
Իմ ժպիտների բնանյութն է:

Իսկ աչքերիցս թափվում են
Ծաղկաբույր կայծեր:

*

Զգացմունքներս
իրար գիրկ մտած՝
Գլխապտույտ
շոյում են միտքս,
Մերկացնում՝ հոգիս.

Երանության մեջ
Այտերիս վրա մնում է

Համբույրների
Հիշողությունը:

*
Արդեն սովորում էի
քո բացակայությանը,
Երբ նորից եկար՝
Մտքերս նորից
խառնելով
քո տաք գրկի մեջ.

Կարոտս վերադարձավ տուն:

*
Սերը գժություն է:

Օրը բացում է աչքերը՝
Անունդ շուրթերի վրա,
Օրը հաղթահարում է
Իրեն բաժին հասած ժամերը:

Հայացքը՝ դեպի քեզ տանող
Ստեղծագործ մտքերի վրա:
Օրը փակում է աչքերը՝
Շնչառությունը ՝
քո կոպերին:

Սիրելը գժվելու նման է,
Օր օրի դատարկվում են դեղատուփերը,
Բայց բուժում չկա:

*

Քեզ տեսնելիս
Երգում են հոգուս
աչքերը,
Արևում է դեմքս,
Անկախ նրանից, թե
դրսում տարվա որ
եղանակն է,
Քայլվածքս փոխվում է,
Մարմինս պարում է
տրամադրությանս
երաժշտության տակ:

Քեզ տեսնելիս
երգում են աչքերս,

Հայացքս հասնում է
Կատարելության:

*

Ինձ ու քեզ բաժանող
Հեռավորությունը
Զուտ պայմանական է,
Ամեն վայրկյանի մեջ
Քո ներկայությունն է.

Դու յուրաքանչյուր բառի մեջ ես,
Լռությամբ ասված՝

Ցանկացած մտքի խորքում,
Որ խմորվում է ուղեղիս ծալքերում:

Դու ամենուր ես:

*

Ուզում եմ բառերով լցնել
Ամբողջ աշխարհը,
Եվ լողալ այդ բառերի մեջ,

Գլուխս դնելով բառերի վրա՝
Նրանց մատների խաղը վայելել:

Ուզում եմ՝ բառերն այդ
Քո շնչով բուրեն,
Քո ձեռքերն ունենան,
և քո աչքերով խոսեն:

*

Առանց քեզ
Դժվարանում եմ երազել:

Տրամադրությանս գունապնակը
Դատարկվում է՝
Հեքիաթային գույներ
չգտնելու պատճառով,
Երաշտից չորացած արահետները
Կորցրել են իրենց հասցեն,
Անտեր ընկած է
Բզկտված երկինքը,

Անտուն է փողոցը,
Կործանված՝ սպասումը:

Դուռդ բաց՝ ներս մտնեմ,
Անտերության մեջ
սառում է երջանկությունս:

*
Տխրությունդ՝
Քամուց դժգույն,
Լցվում է ներսս:

Ուզում եմ զգալ
Հոգուդ շնչառությունը,
Հաղորդակից լինել
Մարմնիդ երաժշտությանը,

Ուզում եմ հասնել
այն մտերմությանը,
Որին անհաղորդ
ապրում եմ կյանքս:

Դժվարանում եմ
նայել ուղիղ աչքերիդ.
Քամին տանում է
պատկերդ:

Այդպես
Թոշնում են
Այգու բոլոր ծաղիկները:

*

«Կարոտը հիվանդություն չէ,
Այլ նորմալ, մարդկային զգացողություն».
Քո այս խոսքերով է սկսվում սպասումս,
Եվ պահը խեղդվում է տխրությունից:

Ուզում եմ ձուլվել
Կարոտիցդ ծնված
պատրանքներիդ մեջ:

Հանգստությունս
Գրկախառնվել է անհանգստությանդ հետ.

Զգում եմ
Օդի մեջ սավառնող շնչառությունդ,
Անզգացմունք գոյությունս
Գգվում է
Քո զգացմունքների տարողությանը,

Ասում ես՝
Ահավոր խանդում եմ.
Շատ սիրելուց է,
Ասում ես՝
Կարոտից խեղդվում եմ,

Եվ օրս կարոտով է լցվում,
Եվ ես, վերջապես, շնչում եմ:

Սիրուց է:

*

Մենք, իրարից այնքան հեռու,
Եվ իրար այնքան մոտ ենք,
Երկխոսում ենք՝
Պահը դարձնելով անհրաժեշտություն:
Միտքը՝ անսկիզբ ու անվերջ,
Մի տարածություն է,
Որտեղ երևակայությունը
Բախվում է
Սահմանափակ իրականությանը,
Եվ մեկ է,
հաղթանակում է սերը:

*

Եվ քեզ հետ է դժվար,
Եվ առանց քեզ:

Իրականությունը
Չի բավարարում ինձ,
Շնչահեղձ եմ լինում:

Քո ձայնը ձգում է ինձ,
ներկայությունդ
հակասական
մտքեր է առաջացնում.
Փախուստ,
Վերադարձ,
Փախուստ:

Տխուր եմ քեզ հետ,
Առանց քեզ տխուր եմ:

*
Ես առանց քեզ

Զրուցում եմ քեզ հետ
ամեն օր:

*
Հանկարծ հայտնաբերում եմ,
Որ փախչում եմ
Քեզ հետ կապված հուշերից,
Թաքնվում՝
Քո մասին մտածելու
որևէ հաջողված մտքից:

Քո բառը, շարժումը, հայացքը
Մրրկում է ներսս,
Ալեկոծում միտքս, էությունս:

Հանկարծ հասկանում եմ,
Որ քո ներկայությունը
իմ գոյությունն է:

*
Քո լռությամբ
Դու խթանում ես
Իմ ու քո
Մտերմության հեռավորությանը.

Մտնում ես
Անհասկանալի տարածքներ,
Հորինում պատնեշներ:

Բաժանվելով՝
Մենք առավել շատ ենք մոտենում իրար,
Եվ տարածությունը
Տառապում է կարոտախտից:

*

Քո ընտրությունը
Մի հնարավոր տարբերակ է
Դեպի կայունն ու մշտնջենականը,
Մեր նպատակը՝
Դեպի երջանկություն տանող
Ճանապարհի հաղթահարումն է,
Լռությունդ՝
Զգացմունքի բոլոր նրբերանգները
տեսնելու կոչ,

Մեր պարգևը
Գունավոր փուչիկներով
երկնքի կապույտում լողալն է:

*

Գոյի տատանումների մեջ
Պատահական հայտնվում է
Մի հաստատուն ձայն,
Անշարժ շարժից

Ծնվում է
Մի անսովոր
Երկրաշարժ.

Ներս ես մտնում,
Մերկացնում հոգիդ,
Բացում թևերդ.
Թռիչքդ գտնում է հեռուն,
Հատում
երաժշտությամբ ու գույներով
արբած անհունը:

Գոյի ու անգոյի ճանապարհին
Բախվում է սպասումը.

Տենչերով է լցվում օրվա քունը:

*
Այսօրվա լուսաբացը
քո ժպիտն ունի,
Քո ձայնով արևը բացվեց:

Քեզ տեսնելու մարմաջը գրկեց ինձ,
Եվ կարոտից ծնվեց
դեպի քեզ տանող ճանապարհը:
Իմ կեսօրը քո դեմքն ուներ,
իմ հորինածը
դու էիր:

Սպասումս ծլարձակվեց,
Օրը վարդի պես բացվեց,
և ես գտա քեզ՝
Առանց պայմանականությունների,
և անցյալ-ապագա ժամանակագրության,
Առանց մշտառկա տարածայնությունների,
Միայն ես ու դու,
Եվ միայն՝
ԱՅՍՏԵՂ ու ՀԻՄԱ:

*

Երբ տեսնում եմ քեզ՝
մեղուն գտնում է իր ծաղկին,
Թիթեռը օդի մեջ պար է բռնում,
Խոտի մեջ բուրում է զատիկը,
Եվ ժպիտս արև է նկարում:

Քեզ հետ հոգուս նեկտարը
Թռչող զատիկի երանությունն է:

*

Հիմա ես
Ինչո՞վ լցնեմ օրս՝
առանց քեզ,

Կարոտը խեղդում է ինձ՝
հեռահարվող ժամանակում,

Որոնում եմ քո հայացքը,
և հուշերիս անդաստանում

բույրով, գույնով լցված
մի այգի եմ գտնում:
Մեղվի ու ծաղկի հաղորդակցումից
Մեղր է քամվում:

Ո՞ւր մնաց իմ մեղուն:

*

Անզգացմունք ցուրտը
հրաժեշտ է տալիս ինձ,
և ես գրկախառնվում եմ
արևի տաք պատկերին,
Շողերից ծնվում է քո դեմքը,
և ես,
քո աչքերի մեջ հայտնաբերում եմ
անզուգական
լուսաբացներն ու արևածագը,

Աշխարհի բոլոր ծաղիկները
բացվում են միանգամից:

*

Պահը կարոտից արտասվում է:
Գրկի՛ր ինձ,
Քեզ հետ կապված հիշողությունները՝
Տաք ու մտերմիկ,
Կարոտի անհույս
Թափառումներում՝

Արցունքի ծով են.

Այդ ծովում խեղդվում են աչքերս:

*

Գժվում ենք՝ իրարից հեռու:
Կարոտից ցավում է միտքս,
Գրկիր
Սպասումների ծովում
Խեղդվող՝
Օրերիս շունչը:

*

Քո կատաղած կարոտն
ու
Իմ ամոթխած սպասումը
Հանդիպեցին իրար,
և ծնվեց ներդաշնակությունը:

Ես սկսեցի սիրել այն,
ինչը մինչ այդ
չգիտեի:

*

Ձանձրույթից
Թևահատ ընկնում է միտքս,
Թափվում են
Սպասումներիս թերթիկները,
Մեկ առ մեկ
Շնչակտուր

Հանձնվում անձրևից
գոյացած լճակներին:

Կարոտից խեղդված
Տրամադրությունս
Անանուն տրվում է
Քամու անորոշությանը:

Թույլ տուր, ապրել
Ակնթարթի կործանումը,
Բայց չկորցնել՝
քեզ տեսնելու հույսը:

*
Քեզ հետ մտնում եմ
Արևածին բառերի խորքը,
Որոնցով հագենում են մտքերս:

Ամենուր դու ես:

*
Դու շարունակում ես լինել
այն արևածագը,
Որով սկսվում է օրը,
և մայրամուտ չի ունենում:
Դու շարունակում ես լինել
այն գիշերը,
Որտեղ երազներից ծնվում են
Չմարող աստղեր:

Օրերի լայնքով ու երկարությամբ
Ձգվում, գծագրվում է քո դեմքը:

Ես շարունակում եմ
նկարել քո ներկայությունը:

*

Երբ տաք ջրից ու պղպջակներից
Բառի մարմինը
Երանության ափերն է ընկնում,
և ուզում ճախրել սիրո երկնքում,
հեռավորության լաբիրինթոսն
ինձ իր գիրկն է առնում,
Եվ բառն
Ուշաթափվում է
Երանությամբ:

*

Ինչքան էլ ուզում եմ հրաժարվել քեզանից՝
էլի հայտնվում ես իմ մտքերի կենտրոնում,
Եվ երևակայությունս նկարում է
արև,
ծով,
երկինք:

Կապույտի մեջ ճախրող
իմ երազանքներում
Քեզնից հրաժարվելու
իմ պատճառաբանումներն
Այնքան էլ տեղին չեն:

Երևակայությանս բազմաշերտ
վարագույրների դիմաց՝
Իմ կասկածամիտ երկընտրանքն է.

Արևմ, թե՞ անձրև:

*
Ամեն երեկո
Մեր մտքերն ու երազանքները
Գերված, գուրգուրված
Դնում ենք բարուրի մեջ,
Եվ օրոր ասում
Քնելուց առաջ,
Ամեն առավոտ
Մեր մտքերում
Առաջինը
իրար ենք ասում՝
Բարի լույս,
Եվ այդպես շարունակ:

Ամեն պահի մեջ՝
Իրար մոտ,
Բայց իրարից հեռու
Շարունակում ենք կյանքի ճամփան:
Տարբեր պատուհաններից

Նույն հայացքներով
Երկնքում մեր արևն ենք նկարում:

*

Դու կարոտում ես ինձ:

Ես կարոտում եմ քեզ,
Ու մենք կարոտից չենք մեռնում,
Պարզապես ապրում ենք,
Ամենքս
Իրար ունենալով:

*

Օդը շնչահեղձ է լինում
Իմ ներշնչանքներում:

Դու քո լռությամբ՝ փակել ես
Իմ ու քո մտերմության
Գաղտնարանը տանող
Բոլոր դռներն ու պատուհանները:

Պահը շրջանագիծ է նկարել,
Եվ մեզ կանգնեցրել
Հարցականների առաջ:

*

Աշխարհի բոլոր սիրահարները
Նույն լեզվով են խոսում,
Նրանց բառերն են՝
Սպասումը,
Կարոտը,
Հավերժությունը:

Երբեք չենք մոռանա այն,
Ինչ պիտի ասեինք,
Բայց չասացինք,
Ամեն դեպքում,
Ասված բառերի մեջ՝
Չասվածն
Առավել մեծ հետք է թողնում:

Սիրո բոլոր պատմություններն էլ
Նույն ավարտն են ունենում՝
Մնում են անավարտ:
Միշտ էլ մի բան կորցնում ենք՝
Մեկ ուրիշ բան պահելու համար:

Երբեք չենք գտնի այն,
Ինչ ուզում էինք տալ:

*
Հիշում եմ
Քո լուռ խոստովանությունները,

Եվ երակներիս մեջ
Շոյվում է արյունս:

*
Ժամանակը խելագարվել է
Հեռավորության
խեղդող ճնշումից.
Բաժանման թաթը
Սեղմում է իմ ու քո ուսը,

Ինձ սովորեցրու
Դիմանալ սպասելու ընթացքին:

Մեզ կապող պարանը սեղմվել է.
Ժամացույցի սլաքները
Կորցրել են իրենց
ուղղությունը:

*

Լռությունդ մտնում է
մտքերիս շքամուտքով
Եվ շարունակում
խոսել ինձ հետ:
Հարցականներն
իրենց պատասխաններով
Տուն-տունիկ են խաղում.
Մենք ոչինչ չգիտենք,
Եվ շարունակում ենք լռել:
Ամեն ինչ ոչինչ է:

Ոչինչն ամեն ինչ է:

*

Օրը մթնում է
Քեզ չտեսնելու
Պահի ծանրությունից.
Երկնքին հրաժեշտ են տալիս
Բոլոր աստղերը:

*

Քեզնից հեռու՝
Մտովի, հրաժեշտ եմ տալիս քեզ,
Եվ շարունակում ճանապարհս,
Իսկ քո կողքին՝
Անցյալում են մնում
Հրաժեշտի բոլոր բառերը,
Եվ ոտքերս՝
Մոռացած իրենց գնալիք ճանապարհը,
Հետ են դառնում
Եվ ուղղորդում
Դեպի քեզ տանող կածանը,
Թևերս, իրենց հանպատրաստից թռիչքն են
Կատարում քո շուրջը:

*

Անունդ պոկում եմ իմ մտքերից,
Դնում արկղի մեջ,
Եվ թաքցնում մի մութ անկյունում,
Որ չվերադառնամ նորից.

Միտքս ամեն ինչ մոռացել,
Միայն քեզնով է տարված:

*

Ոգևորիչ է՝
Բացել աչքերն ու զգալ
Քո ներկայությունը:
Հրճվանք է՝
Առավոտյան սուրճի բաժակի մեջ

Գտնել քո անվան առաջին տառը:
Երանություն է՝
Չհանդիպել քեզ,
Բայց զգալ քո ջերմությունը:

Ուրախություն է՝
Տեսնել քեզ,
և ժպիտներով
Ողողել երկինքը.

Աստղերը վառում են
Մտքիս աչքերը:

Երջանկություն է՝
Իմ նկարած
մեր թռիչքները:

*

Զգում եմ,
Թե ինչպես է իմ ներսը լցվում
Քեզնով.
Իմը լինելու խելահեղություն:
Առիթ-անառիթ
Ամեն բառի մեջ
Հայտնվում ես դու,
Ժամանակի մեջ
Դառնում անհրաժեշտություն:
Ես քո կարիքն եմ զգում,
Ինչպես հրաժեշտը՝ վերադարձի:

*

Թող բացազատվեմ,
Եվ լինեմ քոնը,
Թռիչքներով սնվեմ,
Եվ մոռանամ
Իմ ոտքերի ծանրությունը,
Որ դոփում է ասֆալտներին
Եվ անարձագանք մնում:
Թող լիահունչ շնչեմ,
Թող լիաշունչ հնչեմ,
Որպես աղոթք՝
Պատրաստ խոստովանության:

*

Աչքերս փակում եմ՝ դու ես,
Աչքերս բացում եմ՝ դու ես,
Անքնություն է՝
Մեղավորը էլի դու ես:

Ամենուր ես.
Լիքը-լցված մտքերիս խորքը:

Բառերի մեջ՝ բարձունք ես կարոտաբաղձ,
Արարքներում՝ անկում հիասթափված:
Բարի լույս,
Բարի օր,
Բարի հաջողում:

*

Զգացմունքներս հավաքել եմ
ճամպրուկի մեջ
Եվ շտապում եմ քեզ մոտ:

Վերադարձն անխուսափելի է:

Կատուն նստել է դռան մոտ
և սպասում է մեր
վերադարձին:

*

Սիրում եմ բառերով:

Բառերն եմ սիրում,
Իսկ արարքները մեռնում են անզոր
Հեռավորության լուսանցքների մեջ:

Մեռնում է շունչս, ոգիս,
Սպասումս մթագնած նայում է քեզ,
Մտնում հայացքիդ դռներից ներս,
Իսկ դրսում զույգ սառած աչքեր
Նկարում են անհայտ ծաղիկներ:

Մտապատկերում
Հայտնի ծաղիկն է:

*

Եթե մենք հրաժարվենք մեզանից,
Մեր սրտերը կշարունակեն

Հաղորդակցվել,
Եվ արևը կջերմացնի մեզ՝
Անգամ ամպերի քուլաների տակ:

Անձրևանոցներով պատսպարված
Մեր հայացքները
Չեն պաշտպանի մեզ անձրևներից:
Մենք կհետևենք մեր ծիածանին.
Ամեն մեկս մեր անցնելիք ճանապարհն ունենք:

*

Շնչում եմ՝
Քո մասին մտքերով ծանրացած:

Դու մտնում ես
Այն բոլոր բառերի մեջ,
Որոնցով հագեցած են պահերս:

Աչքերս՝
Քո մասին խոսելուց
Ժպտում են, լռում, տխրում:

Կարոտն ընկնում է շուրթերիս
Եվ ճաքեր թողնում՝
Ցավոտ, դառնացած, արյունոտ:

Մարմինս քո գիրկն է ընկնում,
Հուշերը կանչում են՝
Նախ բարձր,

Հետո՝ խուլ, խզված ձայներով,
Շնչակտուր մտքերս
Սառցակալած քուլաներ դարձած՝
Աղերսում են քո ներկայությունը:

*

Ուզում եմ
Խոստովանություններից ծնված
Անխոստում հայացքներդ
թափանցեն իմ սպասումների
Պատրանքների մեջ,
Եվ բացեն կյանքի ժպիտը,

Որտեղ ես ու դու կլինենք իրար մոտ,
Հեռու բառից՝ հեռու,

Ձև, կառուցվածք, պարունակություն՝
Ամեն ինչ փոփոխական է,
Եվ ոչ էական:
Գունդուկծիկ դարձած սկզբունքները
Գլորվում են, գլորվում,
Եվ, այնուամենայնիվ,
Մի տեղ կանգնում,
Փոխում իրենց շողերը,
Եվ շարունակում հանդերձավորվել՝
Ամեն հագուստի մեջ
թողնելով հիշողությունը:
Ուզում եմ
Ապրումներիս զգացողությունից
Բացել հիշողությանս փակված դռները,

Եվ ներս թողնել
Քեզնով պարուրված հագեցումներս:
Կյանքը
պատրանքներիս պատերին
Ինչ-որ հարազատ բան է նկարել
Քո անվան կողքին,
Արի վերծանենք՝
Ուրիշների նկատմամբ ունեցած
Պայմանական պարտավորվածությունները
Մի կողմ թողած:

*

Մի նոր փակագիծ բացեցի
Եվ քեզ հետ ճանապարհ ընկա:

Ցողեր նստեցին,
Արև դուրս եկավ,
Լիալուսինը իր ողջ հմայքով
Նայեց հիացած:

Աստղերը վերից վար իջան՝
Երկրային կյանքի վայելքով տարված.

Անսահմանափակ տարածությունից
Հայտնվեցին սահմանափակ
Տարածքի մեջ,
Եվ իրենց
Առեղծվածային լույսը չքացավ:
Բացված փակագիծը

Մեզանից սկսվեց
Եվ մնաց բացված:

Ես քեզ ասացի՝ թող արև չլինի,
Եվ արևի խավարում եղավ:
Դու ինձ չասացիր՝ թող լինի արև,
Եվ լուսինն
ընկավ:

*

Դու սովորական օրվա պես
Մտար իմ օրերից մեկի մեջ,
Եվ առավոտ, կեսօր, գիշեր
Լցրեցիր քեզնով,
Այլևս անտրամաբանական ու
անիմաստ էր տարանջատումը.
Ամենուր դու ես,
Առանց պայմանագրերի
Ու պայմանականությունների:
Թվացյալ պատահականությունն
Իր գործն արեց,
Եղավ այն, ինչ պիտի լիներ.
Իմ գոյությունը պայմանավորվեց
Քո լինելիությամբ:

*

Բանաստեղծությունը ծնվեց,
Երբ մտար հիշողությանս տարածություն,
Լինելդ երջանկությանս լուսամուտը դարձավ:

Ամեն անգամ քեզ տեսնելիս
Վարագույրները
Մի կողմ են քաշվում,
Եվ արևը
Մտնում է լուսամուտներից ներս.
Ըմպում եմ
արևահամ օրս:

ԱՌԱՆՑ ՔԵԶ՝
ԵՐԿՆՔԻ ԿԱՊՈՒՅՏՆ ԷԼ
ԱՆԳՈՒՅՆ Է

*

Ես սիրում եմ իմ կյանքը,
Որովհետև դու այնտեղ ես:
Դու սիրում ես քո կյանքը,
Որովհետև ես այնտեղ եմ:

Մենք սիրում ենք մեր կյանքը,
Որովհետև մե՛նք այնտեղ ենք:

*

Քամու մեջ զգում եմ
Շունչդ,
Եվ անէանում:

Մոլորվել
Եվ գտել եմ քեզ իմ ներսում:

*

Օդում զգում եմ
քո ներկայությունը,
Քամին քո և իմ շփոթմունքը
իրենը դարձրած՝
թափառում է փողոցներում.

Դեմքս այրվում է քո ջերմությունից,
Եվ ջերմանում են
Իմ անցած բոլոր ճանապարհները:

*

Քո լռության մեջ
Այնքան խոսքեր կան,
Եվ այնքան լռություն կա
Քո խոսքերի մեջ,

Քո հայացքի մեջ
սեր,
խոնարհում կա,
Իսկ պահվածքդ
Քո զգացածի հակասումն է.

Կրակներն ընկնում են
անշունչ աչքերիս մեջ,
որ ես չսպառվեմ՝
առանց քեզ:

*

Շունչս
կտրվում է
Քո բացակայությունից,
Թախիծը
Թպրտում է
Օդում,
Իմ՝
Քեզ տեսնելու
ժպիտն
իր ափի մեջ է առնում ինձ
Եվ բարձրանում՝
Կարոտը սեղմած կրծքիս:

*

Գժվում է սպասումը.

Օդի մեջ թևածում են
Իմ ու քո կարոտախիտ ապրումները,

Առանց քեզ՝
ամեն ինչ գունազրկվում է,
Զգում եմ տարածության մեջ
շնչասպառ երամների անկումը,
Որոնք գժվեցնող կարոտից
Ընկնում են
սառցակալ քարերի գիրկը.
Ամեն ինչ անհուսալի ցավոտ է՝
Առանց քեզ:

«Խեղդվում եմ» բառիդ մեջ
Խեղդվում է ամբողջ երկրագունդը:

*

Ուզում եմ
արևը քո դեմքն ունենա,
Բայց իմ հոգին
անձրև է նկարում,
Եվ թրջվում է
Մտքերիս մարմինը,

Ինձ խեղդող օդի
անհանգստության մեջ
Քո բառերը

նորից երկինք են նկարում:
Միտքս դողում է քո կարոտից:

*

Իմ հրաժեշտի մեջ
Քո վերադարձի հայացքն եմ գտնում
և հեռանում եմ,
որ վերադառնաս դու:

*

Զգացմունքների տարափից
Հոգեցունց պահս
ուզում է հպվել շուրթերիդ,
Զգալ շնչառությունդ,
Իսկ ասվող բառերը
շարունակում են
Չասել ամենակարևորը:

*

Քամու բերած շշուկներդ
Գրկում են միտքս,

Զգացմունքների տարափից
Պարում է արյունս.

Հոգու խրախճանք է:

*

Քեզնով պարուրված մտքերս
Լուսավորում են
գիշերվա մթությունը.

Երկնքի աստղերը
Իրենց գրկի մեջ են առել մեզ
Եվ ջերմացնում են
ողջ երկրագունդը:

*

Դու ու նորից դու,
Ու ես քայլերս ուղղում եմ դեպի քեզ:
Քեզ հետ
Ու առանց քեզ
Ես հաղթահարում եմ տխրությունը,
Եվ տարածությունը
Դառնում է տուն,
Որտեղ հանդիպում ենք
Ես ու դու,
Ջերմանում է օդը
Իմ ու քո զգացողություններից:

*

Ես քեզ գտա՝
Քեզ կորցնելուց հետո,
Լռությունից ծնված աղմուկի մեջ՝
Գրկած քո շշուկները,
Ամեն օր սպասում եմ քեզ.
Կգամ:

Միտքս շարունակ
կատարելագործվում է
Քեզնով պարուրված հուշերով,
Սպասեմ:
Լույսի ծլնգոցներից
Խեղդվում է տարածությունը:

*

Ես չգիտեի՝
Ինչ է հանգիստը,
Դու եկար
Եվ անհանգստությամբ լցրեցիր միտքս:
Ես չգիտեի՝
Ինչ է կարոտը,
Դու եկար,
Եվ կարոտով լցվեց օդը:

Դառնացած գրկեցի սպասումս,
Եվ մինչև քեզ
Ու քեզնից հետո
Տարածությունը կոչեցի սպասում:

*

Օրվա բոլոր ժամերին
Ես քո մասին եմ մտածում,
Եվ պահը
Վերածվում է
Անհասանելի ճանապարհի.

Խխունջվելու զգացողությունից
Բռաչափ է դառնում գոյությունս:

*

Օրերն իրարից տարբերվում են՝
Քեզ տեսնելու
ցանկությանս չափերով,
Երբեմն ուզում եմ
օրացուցային թվերը խառնել
Եվ հայտնվել կողքիդ,
Որ գրկումս ծփա
աստղածոր երկինքը:

*

Քեզնից սկսվեց ամեն ինչ,
Եվ հեռու եղավ ոչինչը,
Ես ընկա ժամանակի գիրկը.
Մինչ քեզ՝
Ժամացույցի սլաքների շարժը
Նյարդայնացնող կտկտոց էր,
Քեզ հետ՝
Հանգստացնող երաժշտություն:

*

Մոլորվել եմ
Քեզնով պարուրված մտքերի
Լուսարձակներում.
Առօրյա բոլոր իրողությունները
Շրջանցում են ինձ,

Եվ ես շարունակում եմ
Լինել քեզ հետ՝ քեզնից հեռու:
Գրկիդ մեջ ցանկություններս են՝
Բուրումնավետ, թարմ,
Անկրկնելի:

*

Երբ խաչվում են ճակատագրերը,
Այլևս հնարավոր չէ բաժանումը:

«Իրար մոտ
և իրարից հեռու»՝
մարմինների պես՝ կպել են
իմ ու քո շնչառությանը.
Դու շարունակում ես
լինել իմը,
Ես շարունակում եմ
լինել քոնը,
և մենք զգում ենք
մեր ամբողջությունը:

*

Ամեն օր՝
Լուսաբացով ու մթնշաղով
Սկսվում և շարունակվում են
Մտքերս՝ քո մասին:
Եթե իմանաս,
Թե օրվա մեջ
Քանի հարցական
Եվ քանի վերջակետ եմ դնում,

Սակայն մշտապես
Բազմակետերով է փակվում օրս:

*

Դու նորից անհասկանալի լուռ ես,
Տարօրինակ՝ հեռու.

Երեկը կորել է,
Վաղը հրաժարվում է մեզանից,
Եթե վերադարձնեինք մեզ,
Գոնե այսօրը կփրկվեր:

*

Խոստովանում եմ՝
Դժվար է ապրել՝
ունենալով քեզ հեռուներում,
Դժվար է մտածել, և
չուրվագծել քեզ՝ մտապատկերում,
Խոսել, և չտալ քո անունը՝
լուռ, աչքերի ժպիտով:
Դժվար է նայել անհունին և չնկատել
Քո զգացմունքատար դիմանկարը:

Խոստովանում եմ՝
Դժվար չէ վազել, թռչել, երազել,
Երբ քո ձեռքից բռնած է
Սիրո պատրանքը:

*

Կյանքն
Իր շերտավարագույրները
Կախել է
Երազանքներիս պատերին
Եվ ծածկել
Պատրանքներիս ժպտացող դեմքը.
Անգույն դեպքերն
Ու անբույր մտքերը
գերեվարել են ինձ:

*

Օրն արև էր նկարել
Եվ լցրել աչքերիս խորքը.
Կոպերս առավոտվա շաղից
Ժպտում են՝ անասելի ուրախ,
Հարցականներով
կազդուրվող բառերը
Ձանձրանում են անգործությունից,
Ոտքերիս տակ տրորում եմ
Թախծից ծնված բոլոր տերևները
Եվ պտտվում
Քամու անհոգության ուրվանկարում:

Օրվա դադարների մեջ
Միտքս ոչինչ չի կորցնում,
Եվ չի տխրում,
Երբ մտապատկերում ոչինչն է:

Ես վերադառնում եմ տուն,
Լուսնի հայացքում
Իմ գտած
ոչինչն է…

*

Հոտառությունից
Զրկվել է կարոտս:
Զգացմունքը դարձել է
Անհոտ ծաղիկ,

Սպասումը
Թուփ է՝ առանց տերև,
Որտեղ անջուր ձկան նման
Թպրտում է
Երևակայությանս անհուսությունը:

*

Սերը հայտնվում է անսպասելի,
Այդպես բողբոջում է միտքը,
Եվ կյանքդ հայտնվում է
այս կյանքից դուրս.
Ամեն ինչ սկսվում է սկզբից
Եվ ձգվում է մինչ
Թվացյալ անվերջություն:

*

Քեզ հանդիպած ճանապարհին
Հանդիպեցի սրտատրոփ կարոտին,
Տեսա վնասակար հեռավորությանը,

Սեղմեցի վտանգավոր
մտերմության ձեռքը,
Եվ հրաժեշտ տվեցի քեզ՝
Արտագաղթելով ինքս ինձնից:

*

Ես չսովորեցի սիրել մարմնով,
Իմ կենսահյութը՝ հոգին է,
Ինձ մոտ չստացվեց՝
Քո գրկում զգալ աշխարհի քունը:

Իմը՝ անհանգստացնող
Անքնությունն էր:

Շուրթերիս վրա զգացի
Քո փակ աչքերի
անսահման երանությունը,
Եվ բաց աչքերով
Բռնեցի մտքերիս անհունը.
Օրը
կիտեց ունքերը,
Խոժոռեց դեմքը.

Իմ ունեցածը
անմարմին սերն է:

*

Պետք է պահպանել այն,
Ինչ քոնն է,
Իսկ նա, ով քոնն է,

Քեզ հետ կմնա՝
Անկախ պայմանական
Հեռավորությունից:

*

Բառերը դառնում են
խոստովանություն,
Այնինչ, խոստովանությունը
Բառերում չի տեղավորվում:

Օրը տեսնում է սկիզբը,
Բայց ավարտը չի երևում.
Դու այն ընթացքն ես,
Որն ավարտ չունի,
Բաժակի մեջ եղած
Բոլոր կումերն
Ըմպելուց հետո
Անավարտության զգացողությունը
Դառնություն է առաջացնում,

Եթե իմանայիր՝
Հիշողությանս բաժակի
Վերջին չըմպած կումի մեջ
Այնքան անհագ
զգացողություններ կան՝
Քեզ հետ կապված:

*

Համաձայնվիր՝
Իմ ու քո կյանքը
Մի լավ բան մտավ,
Տառապանքի մեջ
Նիրհած իմաստությունն
Արթնացրեց մեզ,
Եվ ասաց՝ ապրելը այս է,
Ահա այսպես
Երակների մեջ
Պետք է կյանքի շունչը զգալ,
Կարոտից խեղդվել,
Բայց էլի ժպտալ՝
Հիշողության մեջ ունենալով քեզ:
Համաձայնվիր՝
Իմ ու քո կյանքում
Արևի շող էր մեր հանդիպումը,
Մինչ այդ
Արցունքն արցունք չէր,
Ծիծաղը լոկ դիմախաղ էր,

Մեր հանդիպումով
Փոխվեց ամեն բան:

Խոստովանիր՝
Այսօրն ավելի լավն է,
Քան երեկն էր,
Կամ՝ նախորդ օրը,
Որտեղ
Մենք իրար չէինք կարոտում:

*

«Թո՞ւյլ ես տալիս սիրել քեզ»
Հարցիդ
Պատասխանս չի ուշանում.
Սերը թույլտվություն
չի հարցնում.
«Կամ սիրում ենք,
կամ չենք սիրում»:

*

Մենք կհանդիպենք,
Եվ լռությունը խոսքեր կունենա,
Մթությունից՝ լույս կճառագի,
Միտքը կգտնի ճանապարհ,
և մենք կխոսենք
սիրո ծաղիկների բացման
ժամանակաշրջանի մասին,
Արևը կժպտա ու կմեղանչի:

*

«Մի՛ տխրիր, խելոքս,
Ժպտա, ուրախ եղիր»...
Դու ասում ես՝ ես լսում եմ,
Դու սպասում ես, ես սպասում եմ,

Հանդիպում ենք մեր մտքերում,
Ես ժպտում եմ, դու ժպտում ես.
Մենք ապրում ենք:

*

Այսօր ես բացում եմ
Հոգուս բոլոր դռները՝
Խոստովանություններդ
Լսելու պատրաստակամությամբ,
Եվ հրաժարվելով
Մինչ այս ունեցած սկզբունքներից,
Քեզ ընդառաջ եմ գալիս.

Հոգիս ծաղկում է կարոտից:

*

Ինձ պետք ես,
Քեզ հետ
ես ապրում եմ,
Առանց քեզ տխուր եմ.
Սիրում եմ,
չեմ սիրում՝ անկարևոր է,
Կարևորը
Ինձ ապրեցնում է
քո գոյությունը.
Ժպիտս քո ներկայությունն է,
Դու իմն ես՝
Ինչպես երակներիս մեջ
ամառ նկարող այս արևը:

*

Տարածությունը,
որ բաժանում է մեզ՝
Շնչահեղձ է լինում.

Կարոտից բառերը
խեղդվում են:

*

Հրաժարվիր ինձանից,
Որ ես սովորեմ
Ապրել առանց քեզ՝
Միտքս ամեն վայրկյան
չի կրկնի քո անունը,
Քեզ տեսնելու ցանկությունս
Այնքան ցավոտ չի լինի,
Եթե դու այլևս իմ մասին չմտածես:

Ես հրաժարվում եմ քեզանից
Եվ փորձում ապրել՝ առանց ինձ:

*

Հրաժեշտից առաջ ասացիր.
«Իմ խոսքերը՝
Վերադարձիս մասին պատմող
Հիերոգլիֆներ են»:

*

Քեզ մոռանալու փորձերս
Ինձ բերում հասցնում են
ուղիղ քո գիրկը.

Թռչունն այնքան մոտ է երկնքին,
Որ կապույտը շոյում է նրա թևերը,
Երևակայության մեջ՝

Երկնքի բոլոր աստղերը
մեր գրկում են:

*

Հրաժարվել քեզանից,
Եվ չլինել քոնը,
Թևաթափ ընկնել
Ձկան բերանը,
Եվ ծովի մեջ ապրել՝
Առանց ծով:

Թե՞
Չհրաժարվել քեզանից,
Եվ լինել քոնը,
Ոգեշունչ թռչել,
Եվ ընկնել
Երամը կորցրած թռչնի բերանը.

Ապրելով երկնքում՝
Առանց երկնքի:

Կամ էլ՝
Մնալ երկրի վրա,
Չլողալ, չթռչել,
Ծովն ու երկինքը նկարել երազում,
Եվ ապրել ցամաքում՝
Առանց քեզ:

Առանց քեզ՝ ի՞նչ ապրել:

*

Օրվա դուռը ճռնչալով բացվում է՝
Եվ դու ներս չես մտնում,
Եվ հիասթափված աչքերս՝
Կծկվում են ցուրտ անկյունում,
Եվ տխրում եմ:
Քո մասին խոսելիս
Նրանք ժպտում են, սպասում:

Անաղմուկ փակվում է դուռը.

Աչքերս
Անհետ կորած են:

*

Ավելորդ բառերից
տարանջատում եմ մտքերս,
Եվ քեզ գրկախառնված շշուկներս
Հավաքում եմ տեսողական հիշողությամբ,
Խնամում նրա մրսած կոկորդը,
Եվ սկսում փոշտալ:

Ցուրտ է,
Վախվորված սառը քամին,
Առանց հարցնելու,
Գլուխը խցկել է ներս,
Եվ բարբաջում է՝
Հիվանդ, կարմրաքիթ մտքեր:

Քեզ հետ, առանց քեզ,
ամեն ինչ հիվանդ է:

*

Խեղդվում եմ՝
Իրականության
Սահմանափակ
Տարածքում:

Երազանքներիս
Օվկիանում
Հոգիս երանելի է:

Շնչում եմ,
Երբ երջանկությունից
Միտքս թռչում է
Անսահմանության
Պատրանքներում:

*

Մարմնի և հոգու բացահայտումներում՝
Բացեցինք դռներն ու պատուհանները,
Որ ազատ թևածի
Լույսը,
խոսքը,
գույնը,
խորհուրդն առեղծվածի,

Եվ սովորեցինք զգալ՝
երջանիկ պահի շնչառությունը:

*

Անտարբերությունը
Լավագույն զենքն է
Ուշադրության հասնելու համար:

Քո լռության մեջ
Զգացմունքների հսկա տարափ է,
Որտեղ նվիրումն ու հավատարմությունն
Անչափելի են,
Եվ ես մատներով
Շոշափում եմ այդ անչափելիությունը:

Զգացումներիս աղմուկը
Դառնում է շշուկ,
Եվ մենք լռում ենք.

Այսպես սկսվում է
երանավետ աղմուկը:

*

Ների՛ր, բայց գնում եմ,
Թռիչքս անհաջող էր՝
Ընկա,
Ջարդված թևերիս ցավը
Մրմռում է կրծքավանդակումս:
Ոչինչ չկա,
Ապշելը տեղին չէ,
Գնալս
Բնական ընթացք է,
Մնալս կլիներ անբնական:

Սուրճը բաժակի մեջ
Անառողջ տեսք է ստանում՝
Չըմպվելուց:

*

Հեռանալուս բարբաջանքները
Կտցահարում են միտքս՝
Գնա:
Վերադառնալու ցանկությունս՝
Մտել է մտքերիս նոտաների արանքը,
Եվ ասում է՝ գնա:

Ոտքերս՝ հեռացումի ու վերադարձի
երկմտանքներից
Շշմած կանգնել են մայթեզրին,
Չգիտեն՝ գնա՞ն, թե՞ մնան:

*

Կհանդիպենք,
և դու ինձ հարցեր կտաս,
իսկ ես քո հարցերի մեջ
Կգտնեմ իմ հարցերի պատասխանները,
Եվ մենք կժպտանք:
Հրաժեշտ կտանք
Եվ կշարունակենք մեր ճամփան.

Մեր հանդիպման ու հրաժեշտի
Ամենաանշշուկ պահերն անգամ
Կլցվեն ժպիտով
ու ջերմությամբ:

Սովորաբար այդպես է լինում,
Երբ բաժանումը
զուտ աշխարհագրական է:

*

Մեր խոստովանություններից
Ամպոտ երկինքն անգամ
արևում է,
Հեռավորությունը, սակայն,
Բոլոր եղանակները խառնում է իրար.
Արևից երաշտ է սկսում,
անձրևից ջրհեղեղներն են շատանում:

*

Ազատ արձակիր ինձ,
Հրաժարվիր ինձանից,
Եվ ես կմոռանամ քեզ՝
նույն վայրկյանին:

Քանի դեռ ես քոնն եմ,
Եվ դու շարունակում ես
Լինել իմը՝
Անգամ լռությանդ մեջ,
Իմ մտքերը
Շնչահեղձ կանեն քո անունը՝
Ամեն պահ, հիշելով քեզ:

*

Երբ երևակայությունս սկսում է կաղել,
Իսկ, որոշ ժամանակ հետո,

Ընդհանրապես դադարում է քայլել,
Զգում եմ,
Որ սկսել ես իմ մասին չմտածել:
Գիշերը
Քունդ խլել է քեզանից
Իմ մասին մտածելու
տխրությունն ու ժպիտը:

Քնում եմ,
Որ հայտնվեմ քո երազներում:

Արի՛,
Իրականության քնկոտ աչքաճպոցում
Երևակայության անքնությանը
Անանուն
Տրվենք:

*
Դռները բացվում են՝
Ներս ես մտնում դու՝
Հիշողության կորստի ախտանշանով:

Ծառն առանց տերև
Գոնե հուսադրող եղանակ ունի,
Իսկ դու՝ ժամանակից դուրս,
Սուլում ես առանց անունի:

*
Սերը՝
Ծաղկած փշալարերի նման,

Արյունոտում է
զգացողությունս:

Աղավաղվում են
մտքիս գույները:

*

Դու քո ներկայությունը
Փաթաթել ես ինձ,
Կաթիլ
առ
կաթիլ
Լցվել իմ մեջ,
և դարձել՝
անհուն,
անսահման, անվերջ:

*

Եթե իմ սիրտն ընտրել է քեզ,
Ուրեմն դու նա ես,
Ում գտնում եմ
Ամեն առավոտ
Վայելած սուրճի բաժակի մեջ,
Նա ես, ում հետ կապված-
Կապկպված մտքերը
Քնեցնում եմ օրորոցայինով,
Հետո նոր իրենք պառկում:
Դու նա ես, ում վրա բարկանում եմ
Ամեն մի լուռ բառի համար,
Եվ հաշտվում եմ դարձյալ:

Մենք վայելելու ենք մեր հաշտությունը
Սիրուց գինովցած
մի քանի բառով:
Դու նա ես, ում համար
Ջնջում եմ
«Չի կարելիների» անլույս պատկերը.
Մենք ապրում ենք
Միայն կարելիներ-ով:

Դու հենց այն կարելի՛ն ես:

*

Հրաժարվում եմ քեզանից,
Բայց քոնն եմ մնում,
Գույների խառնաշփոթում
Օրերս դժգունում են:

Նորից դու ես՝
Քո ճառագայթներով,
Լիացնում նրանց խամրած դեմքը,
Եվ կտավ է դառնում
Յուրաքանչյուր ակնթարթ:

*

Ամեն օր ես հրաժարվում եմ քեզանից:

Ամեն օր ես շարունակում եմ
մտածել քո մասին:

Կռվում եմ, խռովում, հաշտվում եմ նորից,
Եվ շարունակում ապրել՝
քեզ տեսնելու կարոտով,
Դու իմն ես, անկախ նրանից, որ իմը չես,
Ես շարունակում եմ
իմ մենախոսությունը՝ քեզ հետ,
Ամեն պահիս մեջ դու այնքան շատ ես,
Որ երբեմն մոլորվում եմ ինքս իմ մեջ՝
հայտնաբերելով քեզ,
Այնքան և այնպես՝ խորը, անսահման,
անժամանակ, անհասկանալի ու տարօրինակ:

Դու միշտ իմ կողքին ես,
Բայց, ինչպես ինքդ էիր ասել՝
Դու՝ ինձ մոտ, և ինձանից՝ հեռու ես.

Ամեն օր՝ արթնանալուց անմիջապես հետո,
ահավոր տխուր եմ,
Մինչև այն պահը, երբ լսում եմ ձայնդ,
Ու ժպիտը մի քանի անգամ շոյում է դեմքս,
գուրգուրում ինքնազգացողությանս խոպոպները,
Մինչ այդ՝ նրանք խառն էին,
անշուք:

Ուզում եմ այսօր լինել ամենալավը՝

առաջինը առաջիններից,
և դու դա տեսնես,
ու լինես հեղինակն այն ծափողջույնների,
որոնց կրկնօրինակելու հնարավորությունը
քեզանից բացի, ոչ ոք չունի:

Միայն դու,
Միայն ինձ համար,
Միայն մեկ անգամ:

*

Կանգնի՛ր,
ես կարող էի հրաժարվել քեզանից,
ես կարող էի լինել երջանիկ՝
առանց քո հեռու մտերմության…
ես կարող էի,
և, ինչո՞ւ չեմ կարող հրաժարվել քեզանից,
երջանիկ լինել՝ առանց քեզ,
Դու շարունակում ես իմը լինել,
և ինչո՞ւ չեմ դադարում լինել քոնը,

Դու մտնում ես իմ մտքի
ամենանեղ տարածքներն
ու ինչ-որ անսովոր բաներ նկարում այնտեղ,
Եթե, մինչ քեզ, չեմ սիրել որոշ բաներ,
քեզ հետ սկսում եմ գժվել դրանց համար:
Դու հեքիաթներ ես հորինում,
ու ես մտնում եմ դրանց մեջ,

խաղում՝ առանց ընդդիմանալու.
հեզ ու հնազանդ ենթարկվում եմ քեզ,
և չեմ ափսոսում,

պատրաստ եմ փորձարկել
ամենախելահեղ մտահղացումները,
ես վստահում եմ քեզ, և շարունակում ապրել:

*
Ոչ դու գիտես՝ ինչ է սերը, ոչ՝ ես.

Մենք ուզում ենք խելահեղ զգացողություններ,
բայց մեր ցանկությունն
ընդամենը ցանկություն է,
երազանք, որը ստիպում է մեզ հորինել,
երևակայել, ստեղծել կերպարներ,
ովքեր իրականում չկան,

մենք ընդամենը երազում ենք ունենալ այն,
ինչը կորցնում ենք
ունենալուց անմիջապես հետո,
որովհետև ձգտումը ընթացքն է,
հասնումն՝ անկումը:
Սովորությունը կամաց-կամաց
մեզ առնում է իր ձեռքերի մեջ,
և, թվում է մեզ, թե այլևս չենք կարող ապրել՝
առանց մեր սովորությունների,
որովհետև այդպես հեշտ է,
դժվար չէ,

հարմար է:

Մենք ունենք ամենասովորականը,
և այդ ամենասովորականի
ճանապարհին՝
կորցնում ենք անսովորի կախարդանքը,
մինչ՝ կյանքն իր պարն է
պարում
մեր երակներում:

*

Ազատ եմ,
Ես քեզ հորինել եմ,
իմ երազներով կերտել,
և սկսել ապրել քեզ հետ:

*

Ես հրաժարվել եմ քեզանից,
սակայն քո մասին մտորումներս
շարունակում են անհանգստացնել ինձ,
Դու շարունակում ես իմ մտքերի
ուշադրության կենտրոնում գտնվել.
ես նորից երևակայում եմ՝
հորինելով ինձ ու քեզ կապող
գունավոր ժապավեններով
զարդանախշ պահեր,
դադարի՛ր իմը լինել,
ես որոշել եմ հրաժարվել քոնը լինելուց:
Այնուամենայնիվ,
կյանքում պատահականություններ չեն լինում,

բոլոր հանդիպումներն ու բաժանումներն
ինչ-որ բան են ուսուցանում:
Հանդիպումներ կան,
որոնք բաժանումներով են ամրանում:

Մեզ կապող ժապավենը
նոր երանգների փնտրտուքների մեջ է:

*
Քո անունը մշտապես իմ լեզվին է.
Երկխոսությունս սակայն, առանց քեզ է,
մենակ:

Սիրում եմ,
չեմ սիրում,
իսկ, գուցե, սերը հենց այսպես է,
սա է:

Եթե՛, եթե՛, եթե՛,
Պե՞տք են այս գուցե-ներն ու եթե-ները:

Իմ ամենօրյա բառարանի մեջ
Դու դարձել ես
Ամենագործածական հատուկ գոյականը:

*
Օրերն անցնում են,
սակայն քո անունը,
խելահեղ մոլուցքի նման,
կառչել է մտքերիցս և բաց չի թողնում:

Շարունակում եմ քեզ հետ զրուցել՝
առանց քեզ,
Քո ներկայությունը
քո բացակայության մեջ է ապրում:

Քեզ հրաժեշտ տալուց հետո միայն
հասկացա,
որ դու միշտ էլ իմն ես լինելու:

*

Նորից սկսում եմ զարմանալ՝
իմ և, առանձնապես, քո համբերության վրա,
որովհետև դժվար է լռել,
երբ խոսում է
ամենակարող սիրտը:

երբ ես քեզ նման՝ չէի տեսել ու զգացել սերը,
այն ինձ համար լոկ բառ էր,
ընդամենը՝ բառ,
Հիմա ես էլ՝ քեզ նման,
երբ հիշում եմ քեզ՝ ուրախանում եմ,
Իսկ ես միշտ հիշում եմ քեզ:

Սերը լոկ բառ էր, և դարձավ աշխարհ:

*

Երբ տեսնում եմ քեզ՝
ժպիտը արևի նման ջերմացնում է ինձ,
և ես պարում եմ նրա շոյանքների տակ,
– Ես էլ…,– շշնջում ես դու:

Մեր թևերը երկինք են նկարում,
Ուր և մենք վայելում ենք ամենահուզիչ թռիչքը՝
իրարից հեռու:

*

Անցյալը
Պատառոտված լաթի պես
Դարձրել ենք ներկայի զգեստ,
Եվ անտարբերությունը՝
Ծեփած դեմքներիս,
Առաջ ենք գնում:
Քայլերն անհետք են,
Շարժը՝ անաղմուկ:
Անհանգիստ է օդը:
Քեզ մոտ, թե քեզանից հեռու
Սպասելիքները
վնգստոցներ են:

*

Արևը, լուսինը,
աստղերը, երկինքը.
Ամեն ինչ ինձ են սպասում,
Կարող եմ արևը
գիրկս առնել
և պարել
նրա շողերի հետ,
Կարող եմ լուսնի հետ քայլել,
և աստղերի հետ
նորովի նկարել երկինքը,
Բայց լուռ եմ, ծույլ եմ,

գույների խաղին անընտել,
Կարող եմ, կարող եմ, կարող եմ
Աշխարհն իմ գույներով ներկել,
Բայց անկարող ձայնիս մեջ մեխվել՝
Անգույն խեղդոցից գունազրկվում եմ,

Կառչել եմ անիմաստ բաներից,
Եվ իմաստ եմ փնտրում
նրանց մեջ:

*

«Միտքս ես եմ»,– ասում է Ժան-Պոլ Սարտրի
«Սրտխառնոց» վեպի հերոս Ռոկանտեսը.
…«Միտքս ես եմ»…
Եթե մարդու ես-ը
իր մտքերով է պայմանավորվում,
Ուրեմն մարդն էլ փոփոխական է,
Ինչպես իր մտքերը.
Ցանկացած միտք՝
Ինչ-որ տեղից սկսվում,
և ավարտվում է ինչ-որ կետում:

Ծնունդն ու մահը
հարաշարժ իրողություններ են,
Նրանք հաջորդում են իրար,
պայմանավորվում իրարով,
Միթե մարդն իր մտքերի հետ է ծնվում
և մահանում,
ծնվում և անէանում,
և սկսվում նորից՝ նույնը կրկնելու համար:

Մարդն իրեն բացահայտում է՝
Ինքն իրեն կրկնելով՝ «Միտքս ես եմ»,
Ինչպես ցանկացած միտք,
Ես ունեմ սկիզբ, ընթացք, ավարտ,
Այդ ավարտն է որոշելու իմ՝ ով լինելը:

«Ես գոյություն ունեմ, որովհետև ես մտածում եմ»,–
Շարունակում է Ռոկանտեսը,
Այսինքն՝ ես մտածում եմ, ուրեմն՝ ես կամ, ապրում եմ:

ՊԱՏԵՐԱԶՄ
ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

*

Պատերազմն
ինձնից խլում է քեզ.
Ժամանակ ու տարածություն
Մոլորվել են անորոշության մեջ.

Օդը լցվել է կորուստներով.

Իսկ վախն այլևս չկա:

Ինքնամոռացումի ալիքների մեջ
Հայրենիքի փրկությունը
դարձել է գերնպատակ:
Բայց, երբ պատերազմը
պարտադրանք է դառնում՝
Հայրենիքս քո դեմքն է ստանում,
և ես, քեզանից խլում եմ ինձ,
Որ հայրենիքս հաղթանակ տանի:

Իսկ արյան շիթերը շարունակ
հայրենիք են նկարում:

*

Թևաթափ ընկել եմ վերքերիդ,
Եվ մարմինս արդեն
բարձրանալու ուժ չունի:
Աչքերս իջնում են
արցունքներիդ հետ,

Դու ինձ հասել ես
ճակատագրով,
Եթե մինչև անգամ
ընտրության առաջ
կանգնելու լինեմ,
Քեզնից չեմ հրաժարվի:

Դու՝ հարազատ,
Դու՝ սիրելի,
Դու՝ պարտադիր:

Մի ոտքս անցյալի մեջ,
Մյուսը՝ ներկայի,
Ուժասպառ բարձրանում եմ՝
Հույսիս թևերի պարտադրանքով,
Միտքս անկումներից
վեր է
բարձրանում,
Իսկ հաղթանակս
բարձրանալ-կանգնելն է:

Գրկիր ինձ,
Քո գիրկը ոգով զինելու
մեծ հատկություն
ունի:

*

Շունչս կտրվում է,
Երբ տեսնում եմ,
Թե ինչպես է թիրախավորվել
Հայրենիքս,
Հարազատդ
Նայում է մահվան աչքերին.
Ամեն ինչ քանդվում է,
Կորուստների ցավից
տնքում է հողակտորը,
Որտեղ 18-ամյա
սովորական տղաները
դեռ
Հերոսանում են՝
Սասնածռերյան գենետիկ
հիշողությամբ,
Մահն
Ապրելու միակ
նախապայմանն է:
Եվ ապրում ենք՝
Մահվան սարսուռներից
Էլ ավելի ուժեղացած:

*

Հողն արյունածոր
կարմիրով է ներկել օդը,

Սիրտ չմնաց.
Կորուստների ցավից
մեռնում է ժամանակը:

Այսչափ փոքրիկ հողակտորում՝
Այսքան շատ գերեզմաններ
ինչպե՞ս են տեղավորվում:

*

Պատերազմն
իր սիրած գույնով ներկեց
մեր մանկության նկարը,
Ուրախ ու անհոգ
տուն-տունիկ
խաղալու փոխարեն
Լուրջ-լուրջ
Կռիվ-կռիվ էինք անում
Վտանգավոր տարածքում:
Երեկ՝ մենք,
Այսօր՝ մեր զավակները:

*

Ուզում եմ քայլել,
Բայց հողը՝
Որտեղ ոտքս դնում եմ,
Ճչում է.
Երկիրս կլանել է միտքս,
Հայացքս՝ խառնված է մնում երկնքին:

*

Արցախում
Կռիվ-կռիվը դարձել է
սերնդափոխության
կարևոր նախապայման,

Հայրերը
զավակներին
ինչքի փոխարեն
Պայքարի ոգի են կտակում:

Հաղթանակը
միակ երազանքն է,
Որ դարձել է գերնպատակ,
և առաջնորդում է
ծնվելիք մանկանը:

*

Պատերազմը ռումբ է,
Նրա պայթունից՝
Հայրենիքիս արմատները
աճում են
Արցունքածոր աչքերով:

*

Հողը,
որին հենել եմ ոտքերս՝
հառաչով է պարուրում
գուրգուրանքներս,
որոնք
կորստի,
ցավի, տառապանքի
կսկծոցներ են:

Երկինքը,
որին հառել եմ աչքերս,

որոտընդոստ աղոթքներ են՝
կյանքի,
պայքարի, փրկության:

Աստծու օրհնանքը պետք է
Այն մորը,
ում ձայնից խլանում է երկինքը,
Այն հորը,
ում լռությունից ճաքում է հողը,
և այն մանկանը,
ով ծննդյան պահից
իր ուսերին է
կրում
երկիրը:

*

Հայրենի՛ք,
Եթե ես չեմ կարող առանց քեզ,
Ուրեմն դու իմն ես ավելի,
Քան տերևը ծառինը,
Ծառը՝ հողինը,
Հողը՝ ջրինը:
Եթե ես չեմ կարող
առանց քեզ,
Ուրեմն ես քոնն եմ ավելի,
Քան աստղերը՝ երկնքինը,
Երկինքը՝ երկրինը,
Երկիրը՝ բոլորինը:

*

Հայոց հողում
Ձինվորագրված՝
Փոքրից մինչև մեծ,
«Գիտակցված մահը
անմահություն է».
կարգախոսով ենք առաջնորդվում՝
Ավարայրի
ճակատամարտից սկսած
Մինչև Արցախյան
երկրորդ պատերազմ,
Մինչև անգամ
Անորոշ կարգավիճակում
հայտնված մեր ներկան.

Մահվան ուրվականն
Ամեն պահի մեջ
մեզ հետ պատերազմում է:

*

Բարձր գլխով ենք ընդունում
Պատերազմող երկրի
Բնակիչը լինելու
մեր պարտականությունը,
Սովորական՝
ամեն օր զոհ ունենալու մասին
լուրերը,

Թշնամու կրակահերթերը
այլևս անհանգստություն չեն.

Հողը բուռ-բուռ լցվել է
մեր երակները,
Ոտքերիս տակ
միմիայն արյուն է՝
Տաք, սառը,
արտասվելու չափ
հարազատ դիմագծերով:

Հպարտություն է
այս երկրի բնակիչ լինելը,
և, ամեն պահի մեջ,
Պատրաստակամ
պայքարելն ու մեռնելը:

Հայրենասիրության մասին
Քո խոսքերն ու
Իմ հայրենասիրությունը
Երկփեղկվում են,

Իմ երկիրը
Քո երկրից դուրս
Մի երկիր է:

Դու խոսում ես
Աստծո մասին,
իրագործում՝
Աստծո տասը
Պատվիրանները՝
Ժխտելով չ մասնիկը:

Հողը, որտեղ ապրում ենք,
Քեզ համար նյութի խորհուրդ է,
Ինձ համար՝ հոգևոր տարածք,
Ես շտապում եմ,
և առաջ անցնում
քո քայլքից,
բայց առաջին տեղում
միշտ դու ես հայտնվում.

Ժամանակի քծնանք:

Ես ամբողջ օրը
որոնումների մեջ եմ,
Իսկ դու գտնում ես՝
Առանց որոնումների.
Կյանքի քմահաճույք:

Իմ ու քո ճանապարհները
Չեն բախվում,
Քոնը նյութն է,
իմը՝ հոգին ու միտքը:

*
Քո գլխավերևի երկինքը
Պատռվել,
Եվ մահը ճանկել է քեզ՝
Առանց որևէ հաշվարկի:
Սպասում ես որդուդ վերադարձին,

Բայց վերադարձի ճանապարհները
Փակ են:

Սա քո պատերազմը չէ:

*

Արցախս
տագնապած
թաքնվել է
իր բնակիչներից,
որոնք դիմակավորել են
նաև աչք ու ականջ:
Արցախս, եթե ծով ունենար,
Կցամաքեր,
այլևս արցունքներ չկան:
Բթացած մտքերն՝
Ամբողջովին մերկ,
Թևածում են օդում,
Սուտը տնից տուն մտած
Խլացնում է բոլորին:

Խլությունից
տառապում է Արցախս,
Նա աչքերը չգտնելու վախից
տնտղում է դեմքը:

Անառողջ թպրտում է
սիրտս:

*

Պատերազմող երկրի քաղաքացին
Տուն ու տեղ կորցրել,
հայտնվել է փողոցներում:

Երկիրը ոչ պատերազմ,
Ոչ խաղաղություն
կարգավիճակում՝
Ամեն օր,
տասնյակ զոհերի
անուններ է գրանցում:

Քաղաքական դաշտում
անհասկանալի ու
վտանգավոր
խաղեր են խաղում՝
մահացու կրակահերթերով,
Անորոշ կարգավիճակում
գտնվող երկրի քաղաքացին
անճարակությունից
կորցնում է
իր հույսի վերջին կաթիլը.

Ցավի ծանրությունից
Ամրակուռ հողը
ճաքեր է տալիս:

*

Ռմբակոծված հայրենիք,
Ուզում են

Քարից հաց սարքող ազգիդ
թողնել անտուն:

Ավերակներից հառնող հայրենիք,
Հայը քարուքանդված
պատիդ ներսում էլ
հոգի է դնում,
Եվ կյանքով լցնում
«գորշ ու խամրած»
հողակտորդ,
Արյամբ
գծված
իմ հայրենիք:

*

Հրաժեշտի բոլոր բառերն
ասես քամու աչքեր են,

Լացահառաչ երկինքը
Նկարում է հեռացումի
ցավատանջ դեմքը:
Ներկայի հայացքում
Դրոշմվել է հիշողության շունչը:
Այնտեղ են պատսպարվում
Որդեկորույս մայրն ու
Հայր կորցրած զավակները:

*

Այս պատերազմն՝
Անկոչ հյուրի պես,

մտավ տնից տուն,
Ջարդուխուփ արեց
Լուսամուտներն
Ա՛յն հոգիների,
Որոնց սպասումն աղոթք էր,
Եվ դարձավ կարոտ՝
դառնացած,
աղո՛ռտ:

Այս պատերազմը,
Բոլոր պատերազմների նման,
Սկսվեց ոգու հաղթանակով,
Ցավոք, ավարտվեց
հոգու պարտությամբ:
Այս պատերազմն
Իր գունապնակը
դատարկեց ամբողջությամբ.

Կռվողն էլ էինք մենք,
զոհվողն էլ:
Այս կռիվը, սակայն,
մերը չեղավ:

*
Օրերը հրաժեշտ են տալիս իրար՝
Հիշողություն դարձնելով ներկան:
Մեր հողում
Քայլերն այլևս հետքեր չեն թողնում,
Շշուկը արձագանքում է
Եվ կորչում անզգացմունք:

Բարձր խոսելը
Սովորական երևույթ է:

Երկրագունդն ականջի ցավից
Տանջում է բնակչությանը.
Նորից տունդարձի ճանապարհին ենք:

*
Տե՛ր,

Օրեցօր
Կատվի մլավոցի է վերածվում
ազգիս մռնչյունը:
Երկրիս հայացքի մեջ
Ոգեշունչ գույներ լցրու,
Անէացրու վախերն
Ու հիասթափությունները,
Որ ներկան
անցյալի հավատն ունենա:

*
Արյան մեջ թաթախված
իմ հողակտորն
Այլևս չի հանդուրժում
ոչ մի պատճառաբանություն:

Հավերժի ճամփան բռնած որդու
անմնացորդ սերն
Այլևս արդարացումներ
չի հանդուրժում,

Բաց են բոլոր դռները,
Արտագաղթն
արդեն հիմնախնդիր է,
Այսօր, առավել քան երբևէ,
հողս կարոտ է ողջագուրման:

Խոսքերն ավելորդ են,
Ո՞ւմ են պետք բառախաղերը.
Որդուն զոհ տված մո՛ր,
Հայր կորցրած զավակի՛ն,
Ով ամեն պահի մեջ
Սեղմվում է ցավից՝
Զգալով երկինք համբառնած
Շունչն ընկերոջ:
Թե՞ հաշմանդամին,
Ով հիշողությամբ է
Գրկում կնոջը:

*
Աղավնիները կարմիր են:

Խաղաղությունը
Թնդանոթի զարկի նման
ավարտում է ամեն բան.
Կյանքն ու մահը
գրկել են իրար:

*
Արյունաքամ իմ հայրենիք,
Առանց քեզ անհնար է,

Բոլոր ճանապարհները
քո գիրկն են բերում,
Քեզ մոտ են միայն
Իմաստավորվում
Խոստովանությունները,
Սերը թևերն է բացում.
Երազանքներն իրականանալու
համոզվածությունն ունեն,
Եվ ի՛նչ, թե քո մասին հուշերն
Առավել շատ են,
Քան քարտեզագրված
Տարածքներդ,
Մեծ՝ քան
Հոգուդ հայրենիքը:

*

Մտքերս ճամփորդում են
քեզ մոտ տանող այգիներում.
Խոստովանություններդ՝
ծաղիկների նման,
ընկնում են գիրկս:

Քո աչքերի արևներից
Կարմիր են հագնում շուրթերս:

*

Արցունքներդ սրտիկ-սրտիկ
ընկնում են
Մտքիս հայացքի վրա,
Բառերի կոպերը սեղմվում են.

Հարցնում ես՝
Լսո՞ւմ եմ ճիչդ,
հոգուդ շառաչը:

Իհարկե,
Հոգուս ձայնը
Գրկախառնվել է ձայնիդ
Եվ սրտիկներ է նկարում
աղե արցունքներից:

*

Տղան
հոր զինվորական
հագուստն է հագել,
Աղջիկը
գրկել է հոր նկարը,
Մայրը
որդու գերեզմանոցի
Առաջ է ծնկել.
Ըմբոստության
կոչեր են հուշերը,
Այս հողում
Պատերազմը չի ավարտվում:

*

Պատերազմը
փոխել է
բոլոր գույները,
Եղանակներն

արդեն
հիասթափեցնող են.

Արևը ժպիտ չի նկարում,
Էլ ոչ մի անձրև
Մեզ երաշտից չի փրկելու:

*

Ժամանակը,
հավաքելով
Իր մարմնի ծանրությունը,
կուչ է եկել
անորոշության դռան արանքում,
Վախն աչքերը փակած՝
Շնչահատ,
թաքցնում է իրեն
մոտակա ախոռներում,
Որտեղ
Ձիերի փոխարեն
Արդեն ավանակներ են որոճում:

*

Կատարելագործված երազանքներս
Անկատար իրականության
Անշունչ պատրանքների մեջ
Կորցնում են իրենց վերջին սպասելիքը:

Եվ ճիչը
նրանց անզորության
Խլացնում է

սիրո
ականջները:

Օրը ծլնգալով ավարտին է հասնում:

*

Պատերազմը
մտել է մեր ներսը,
ճյուղավորվել՝
խեղդում է
մեր գոյությունը:

Կյանքը պատրանքներից զուրկ է,
Ամեն ինչ
իրականի նման անիմաստ է:

*

Ժամանակն օդում անտարբեր
ճոճվում է:
Մենք սպասում ենք,
Թե երբ կխախտվի
Իմ ու քո լռությունը:

Ծանրաշունչ խոհերն
իմաստազրկում են
Կյանքը պարուրող
բոլոր գուրգուրանքները,
Եթե խոսքը չպատռի լռության
դիմակը՝

Սիրո դեմքն աղավաղվելու է
դառնության խորշոմներով:

*

Երկիրս վախվորած
Թաքնվել է իր մտքերի ընթացքից.
Ականջալուր աշխարհը
խլությամբ է տառապում:

Անվերադարձ կորուստներից
Հայի ցամաքած հայացքը՝
Դռնեդուռ ընկած,
Որոնումների պարտադրանքն է
Կորացած ուսերին տանում,

Ինքնասիրության կորստից
Բոլոր դիմագծերն աղավաղված են.
Երկրիս դիմանկարն
անորոշ է:

*

Ես ինչ-որ մեկին հրաժեշտ եմ տալիս,
Եվ թախիծը՝
Հոգնած
անընդհատ կրկնվող բառերից,
ձեռքն է թափ տալիս,
Տրամադրություններից ծնված
հակասական մտքերը
Քամու ապտակներից
դիմազրկվում են.

Ինչ-որ մեկն ինձ հրաժեշտ է տալիս
և տառապանքով է ներկվում միտքս:

*

Բացազատում եմ
ուղեղիս թիթեռներին,
Ափիդ մեջ դնում
դեմքիս արևը,

Ժամն ու ժամանակը
Պայմանական են,
Պայմանական են
Տարածքն ու տարածությունը,

Օդի մեջ պայմանական է
Ճախրանքս:

*

Երկրիս հոգու զարկերում
Հուշերը
Դրոշների պես
Սթափվելու կոչեր են անում.

Հայրենիքիս դրոշը,
Կարմիրից բացի,
Նաև կապույտ ու ծիրանագույն
Երանգներ ունի:

*

Ամեն ինչ վերջացած չէ.
Հաղթանակի հավատով
Զոհված
Զինվորն ու հրամանատարը,
Երկնքում
Պարտության հետ
Չեն հաշտվում.
Հրաժեշտի խոսքերը
Վերադարձի ոգով են
զինված,

Անուններ կան,
որ տունդարձի են սպասում:

*

Կորստի ցավը
Սպանում է բանականությունը,
Եվ մենք քայլում ենք
Մեր ոտքերի համար
Տարօրինակ
Ու անսովոր ճանապարհով:
Անտարբերության մեջ
Ջղաձգվում են
Մեր անդիմակ մտքերը:
Այլևս գոյություն չունեն
Ժամ ու ժամանակ,

Ոչինչ և ոչ ոք:

*

Պատերազմի հոտը
Զգում ենք
Պատերազմից հետո:

Մահվան գիտակցումը
Վտանգից հետո է
Հասնում
Մեր գիտակցությանը:

Պատերազմում
Հաղթանակներ չեն լինում:

*

Ոտքերը
Վերադառնում են տուն,
Իսկ վիրավոր մտքերը
Թաքնվում են ստվերներում.

Ամենուր հետքեր են՝
Արտասվալից, տխուր:
Հանգչած աստղերը
Խամրում են
Անգամ հիշողության աչքերում:
Ժամանակը դաժան է.

Վերադարձներ չեն լինում:

*

Մահը ծաղր է.

Կինն
Արհեստական բեղմնավորմամբ
Զավակ է ծնում՝
Զոհված որդու
Տունդարձի ճամփան գրկած.
Սգակիր մտքերը
ծառ ու ծաղկունք են նկարում:

Հարսանեկան զգեստով
աղջիկը,
Ծնկած գերեզմանաքարի առաջ,
Հոր օրհնությունն է ստանում
Եվ հետո միայն
Ոտք դնում նոր կյանք.
Ճերմակ հետքերը
Երկինք են նկարում:

Արվեստագետ որդին,
Զինվորական հագուստ հագած,
Հոր վերջին շունչը զգացած
Հողն է պաշտպանում, Նրա
թափած արյունն
Այդտեղ
Հաղթանակ է նկարել:

*

Ցավը
Սևով է ներկել երկինքը:

Ժամանակակից տեխնոլոգիաների միջոցով
Մարդը ժպտում է:

Մեր երկրի քարերն
Այնքան շատ էին,

Որ քարերն ենք գրկում,
Համբուրում.
Քաջերն
այսուհետ
նրանց մեջ են ապրելու:

Ցավը
Ծնկաչոք
Լիզում է ապրողների արյունը:

ԿԵՆԴԱՆԻ ՌԻԹՄ

Քո գիրն իմ խելագարության սահմանն է,
և ես երջանիկ եմ,
որ իմ աղջկա տարիքից
ետ չեմ մնացել –
թեև հայ կնոջն առհասարակ հակացուցված է
բանաստեղծությունը,
որովհետև նա չի կարող ասել –
ես տոչորած հող եմ, դու՝ անձրև,–
ինչպես խելագարվում էր Մարինա Ցվետաևան –
բայց քո գիրն իմ խելագարության սահմանն է,
որովհետև չասված, տողատակերում թողնված –
այդ բանաստեղծությունը մի օր
կատարյալ բացվելու է՝
որպես առաջին գիշերվա նվիրում,
և երգը վերադառնալու է
վաղանցուկ սերերի և հավերժական տառապանքի նման,
որպես ադամական մեր օրերի
միակ մխիթարություն –
քանի դեռ կարողանում ենք
սոսկական խոնջանքն անվանել ՍԵՐ
և տվայտանքին ասել
թանկ սպասում...
Այնուամենայնիվ, հայ կնոջը
հակացուցված է գրել
կաղկանձող բանաստեղծություն,
որովհետև նա կարծում է,

թե տղամարդն իրեն պիտի
բարձրացնի,
մինչդեռ իրականության մեջ
ճիշտ հակառակն է՝ կինն է
տղամարդուն աստվածացնում,
և այս գիրքն անակնկալ էր
արցունքի մաքրությամբ
և սպասումով, որ
ինչ-որ տեղ կամ հենց
բանաստեղծուհու կողքին
նիրհում է
անեղծությունը,
բայց մենք սովորական մահկանացու ենք
և ուզում ենք հարբած լինել,
որպեսզի կարողանանք անկեղծանալ,
սա ընթերցողի խոսք չէ, կարծիք չէ, տպավորություն չէ:
Ինչպես հասկացել՝ արձագանքում եմ: Լավ գիր է: Առողջ տող:
Կենդանի ռիթմ:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

«ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Ալիսա Բաղդասարյանի պոեզիան աչքի է ընկնում պատկերավոր մտածողությամբ, ասելիքի թարմությամբ ու ապրումների անմիջականությամբ: Ասվածի հերթական վկայությունն օրեր առաջ ընթերցողի սեղանին դրված «Պատերազմից հետո» բանաստեղծական ժողովածուն է:

Արցախյան երկրորդ պատերազմն իր հետքն է թողել յուրաքանչյուրիս հոգում: Պատերազմը շարունակվում է մեր ներսում և մեր շուրջը:

Ալիսա Բաղդասարյանն այս ծանր օրերին ևս իր կոտորակված ժողովրդի կողքին է: Մոր հոգածությամբ փորձում է ամոքել հայրենի եզերքի արնածոր վերքերը: Բանաստեղծուհին արձանագրում է. հայը կորցրել է ժամանակի ու տարածության զգացողությունը, նա խարխափում է անորոշության ծովում: Ալիսա Բաղդասարյանը շնչում է հայրենի Արցախի՝ կորուստներով ծանրացած օդը, զգում է մահվան անխուսափելիությունը, գիտակցում է, որ մեզ պարտադրել են 21-րդ դարի ամենադաժան ու անհավասար պատերազմը, բայց նա, հայ կնոջը յուրահատուկ խիզախությամբ, ասում է.

Բայց, երբ պատերազմը
պարտադրանք է դառնում՝
Հայրենիքս քո դեմքն է ստանում,
և ես, քեզանից խլում եմ ինձ,
Որ հայրենիքս հաղթանակ տանի:

Իսկ արյան շիթերը շարունակ
հայրենիք են նկարում:

Պատերազմն իր հետ ցավ ու տառապանք է բերում, արյան ծանրությունից հողը տնքում է: Սասնա ծռերի գենետիկ հիշողության կրողներն են խրամատում կանգնած 18-ամյա պատանիները, ովքեր սեփական արյամբ հայ ժողովրդի լինելիությունն են կերտում:

Մահվան ուրվականը կրնկակոխ հետապնդում է մեզ, բայց մենք անում ենք ամեն հնարավորն ու անհնարինը՝ մեզ բաժին հասած հայրենիքը փրկելու համար, արձագանքում է բանաստեղծուհին:

Կեղծ հայրենասիրություն խաղալ պետք չէ, գրեթե բառացիորեն ակնարկում է Ալիսա Բաղդասարյանը: Հոգևորի ու նյութականի սահմաններն է ճշտում նա: Մեզ բաժին հասած ողբերգությունների հիմքում նյութականը հոգևորից վեր դասելն է: Թվում է՝ Արցախն ինչ-որ տեղ խռով է իր իսկ ժողովրդից, ժողովուրդ, որն աստիճանաբար կորցնում է իր ազգային դեմքն ու դիմագիծը.

Սուտը տնից տուն մտած
Խլացնում է բոլորին:
Խլությունից
տառապում է Արցախս,
Նա աչքերը չգտնելու վախից
տնտղում է դեմքը:
Անառողջ թպրտում է
սիրտս:

Սրտի ցավով է նա արձագանքում քաղաքական խաղերի ու դավերի ճիրաններում տառապող ժողովրդի հառաչանքին: Խաղաղությունն այսօր էլ հարաբերական է: Բանաստեղծուհին ահազանգում է. պատերազմող երկրի քաղաքացուն վտարել են սեփական հայրենիքից, նա հայտնվել է փողոցում: Նման պարագայում արտագաղթը ժամ առ ժամ դառնում է օրախնդիր: Ալիսա Բաղդասարյանի և նրա սերնդակիցների համար պատերազմը առօրյայի անբաժանելի մասն է, ուր տունտունիկի փոխարեն երեխաները կռիվ-կռիվ էին խաղում: Ցավալին այն է, որ սերնդեսերունդ նույն խաղն ենք խաղում՝ երեկ՝ մեր ծնողները, այսօր՝ մենք, վաղը՝ մեր զավակները: Պատերազմն այս հողում չի ավարտվում, այն չարորակ ուռուցքի (քաղցկեղի) նման շարունակ ճյուղավորվում է մեր ներսում և «խեղդում է մեր գոյությունը»: Բանաստեղծուհին դառնանում է, որ պղծում են իր նախնիների արյունով ներկված սրբազան հողը: Նա համոզված է, որ եթե կա պատերազմ, ուրեմն, անկախ նրանից, թե ով է հաղթում, բոլորն էլ պարտվում են: Մարդկությունն օրեցօր ավելի ու ավելի է խորանում մեղքերի թավուտ լաբիրինթոսում: Ալիսա Բաղդասարյանն ակնարկում է մարդկության գլխին դամոկլյան սրի նման կախված տարատեսակ աղետների մասին: Միայն սերը կփրկի աշխարհը. այս է բանաստեղծուհու համոզմունքն ու հավատամքը: Հայրենիքը բանաստեղծուհու համար լոկ աշխարհագրական տարածք չէ, այն տուն է, օջախ: Հայրենիքը բացարձակ ու անսակարկ սեր է, առանց որի շնչելն է անգամ անհնար:

Բանաստեղծուհին, ինչպես յուրաքանչյուր կին, ուզում է լինել սիրված, հոգատարությամբ և ուշադրությամբ շրջապատված: Նա գիտե իր արժեքը, բայց ունի նաև իր իսկ գծած բարոյականության ու ազնվության, ինքնասիրության ու ազատասիրության սահմանը: Լռության խորհուրդը, լուռ,

հեռվից հեռու հաղորդակցումն Ալիսա Բաղդասարյանի մեջ ծնում են պլատոնական սիրո մաքրամաքուր զգացմունքը: Լռության խորքում, չասված բառերի ու անտարբերության արանքում բանաստեղծուհին որսում է օդից կախված աղմուկը, անսահման նվիրումն ու անսակարկ հավատարմությունը: Իրական սերը չասված խոսքերի մեջ է ապրում: «Օրվա տունը» անսեր ու ցուրտ է առանց սիրելիի արևշատ ներկայության: Դատարկ է կյանքն առանց սիրելիի: Կարոտը խեղդում է: Բանաստեղծուհին խոստովանում է.

Քեզնով ներծծված կարոտս
Կատաղի թափով
Ներխուժել ու գրավել է
Մտքիս բոլոր ծալքերը:

Այդ կարոտից «միտքն է ցավում», անգամ օրն է խենթանում: Միակ փրկությունը «տաք ու մտերմիկ» հուշերին ապավինելն է: Այդ «անդաստանում» դրախտն է՝ իր ամբողջ ներդաշնակությամբ ու երանությամբ.

Խոստովանություններդ՝
ծաղիկների նման,
ընկնում են գիրկս:

Քո աչքերի արևներից
Կարմիր են հագնում շուրթերս:

Ալիսա Բաղդասարյան կին-բանաստեղծուհու համար դատարկ ու անիմաստ է կյանքն առանց սիրելիի ջերմացնող ներկայության: Այդ ներկայությունն օդի ու ջրի նման

աստիճանաբար դառնում է անհրաժեշտություն, դառնում է Անհունը: Կյանքով, սիրով ու թրթիռներով լի կինն է խոսում բանաստեղծուհու շուրթերով, կին, ով կարող է գրկել արևը, զվարճանալ ու պարել արևի շողերի հետ՝ անվարան ու համարձակ:

Շուրջը կյանքը եռում է իր բազմաշերտ գույներով, իսկ սիրած էակից հեռու լինելն ու սպասումը ժամանակ առ ժամանակ կասկածամտության, հիասթափության սերմեր են գցում բանաստեղծուհու հոգու մեջ. նա կծկվում է ցրտից ու տխրում: Բայց ներքին հավատն ու լավատեսությունը, կենսասիրությունը ճեղքում են ամեն ցավ ու պատվար, բանաստեղծուհուն դարձնում կյանքին ու աշխարհին հավերժ սիրահարված նույն հավերժահարսը:

Ալիսա Բաղդասարյանը խորքով բանաստեղծուհի է: Ասածս հաստատելու համար բավական է մեջբերել մի փոքրիկ հատված.

Օրվա դուռը ճռնչալով բացվում է՝
Եվ դու ներս չես մտնում,
Եվ հիասթափված աչքերս՝
Կծկվում են ցուրտ անկյունում,
Եվ տխրում եմ:

Քո մասին խոսելիս
Նրանք ժպտում են, սպասում:

Անաղմուկ փակվում է դուռը.

Աչքերս
Անհետ կորած են:

Առանց սրտի տիրակալի, առանց սիրած էակի «անտեր ու բզկտված է» անգամ մով երկինքը, անդեմ է փողոցը, «սպասումը՝ կործանված»: Բանաստեղծուհին, թվում է, ճչում է.

Դուռդ բաց՝ ներս մտնեմ,
Անտերության մեջ
սառում է երջանկությունս:

Վստահ եմ, որ «Պատերազմից հետո» բանաստեղծական ժողովածուն ջերմ ընդունելության կարժանանա և կգտնի իր հավատարիմ ընթերցողին:

ՆԱՆԱՐ ՍԻՄՈՆՅԱՆ
բանասիրական գիտությունների թեկնածու

ՍԻՐՈ ՈՒԺԸ

Ալիսա Բաղդասարյանի պոեզիան իր ինքնատիպությամբ, կանացի նուրբ ապրումակցմամբ պարզ ու անմիջական զրույց է ընթերցողի հետ: Նրա նոր՝ «Պատերազմից հետո» ժողովածուն, աչքի է ընկնում թեմատիկ բազմազանությամբ. սիրերգություն, հայրեներգություն, մարդերգություն՝ պարուրված ցավով, բայց և վերընձյուղվելու հավատով:

Գրքում ակնառու են սարսռազդու պատերազմի թարմ հետքերը: Ով կպատկերացներ, որ դեռևս առաջին պատերազմից խեղաթյուրված մանկություն ապրած բանաստեղծուհին և նրա սերնդակիցները նորից կվերապրեին նույն մղձավանջը, ավելին՝ այս անգամ արդեն կփորձեին պաշտպանել իրենց բալիկներին՝ դրանով իսկ ավելի մեծ տառապանք ապրելով:

«Պատերազմից հետո» շարքի տողատակերից հնչում է պատերազմ սանձազերծող անգույն ու անհոգի քաղաքականության, սֆինքսված աշխարհի դեմ աղաղակող, բայց և արցախի հողում ամուր կանգնած արցախուհու ճիչը: Այդ օրերի ռմբակոծության դղրդյունից ու այրված օջախների ծխից խլացած ու կուրացած աշխարհն անկարող է լսել բռաչափ հայրենիքը բալիկով՝ նույն բռաչափ սրտում բարուրած, ավելին՝ սիրած էակին սպասող, հույսի ծրարում ծրարված արցախուհու խարազանող ցավ-աղաղակը…

Ալիսա Բաղդասարյանն ապրում է պատերազմի անգույն գույները, քանզի այն գունազրկում է մարդու ներկան, անորոշության անգույն շղարշով պատում ապագան, ջնջում անգամ անցյալի արժեքներն ու հիշողությունները՝ թողնելով միմիայն մեկ գույն՝ պատերազմի սևը: Բայց արցախցին մասնատվելու, ոգով պարտվելու իրավունք չունի.

Ամեն ինչ վերջացած չէ.
Հաղթանակի հավատով
Ջոհված
Զինվորն ու հրամանատարը,
Երկնքում
Պարտության հետ
Չեն հաշտվում.
Հրաժեշտի խոսքերը
Վերադարձի ոգով են
զինված,

Անուններ կան,
որ տունդարձի են սպասում:

Պայքարի ոգին՝ որպես ինչք իր զավակներին կտակող արցախցին պարզապես անպարտելի է:

Ալիսա Բաղդասարյանի մայրական աստվածային սիրուց ու ցավից ծնվում է գուցեև՝ այլազգի մայրերին անհասկանալի, բայց հայ մոր անհուն փափագը՝ խաղաղասիրությունը, ասել է թե՝ ապրեցնող ու ներդաշնություն բերող զգացողությունը.

Խաղաղությունը
Թնդանոթի զարկի նման
Ավարտում է ամեն բան.
Կյանքն ու մահը
Գրկել են իրար:

Տառապանքը վեհացնում է մարդուն՝ ծնունդ տալով մշտահիմա սիրուն. այս է «Քեզ տեսնելիս երգում են հոգուս աչքերը», «Առանց քեզ՝ երկնքի կապույտն էլ անգույն է» շարքերի խորհուրդը:

Անհուն լռության մեջ սերը խոսուն է.
Քո լռության մեջ
Այնքան խոսքեր կան…

Սիրտը գրկում է սեր, հոգին՝ անձրևակաթիլ, որից թրջվում է մտքերի մարմինը՝ անհանգստության մեջ ծնունդ տալով սեր-բառերին.

Քո բառերը
նորից երկինք են նկարում:

Սեր-համբույրից ծաղկում է շուրթերը, դողացող սրտի զարկերը արագացնում են շնչառությունը, անհանգստությունը զարմանալիորեն դառնում է հաճելի ու գեղեցիկ.

Արագացված շնչառությանս,
Եվ սրտիս դողի մեջ
Միտքս՝ քեզնով պարուրված,
Հրձվանք,
Կսկիծ,
Կասկած,
Ամեն ինչ խառնում է,
Եվ ինչ գեղեցիկ է
Անհանգստությունս:

Սերն է ապրեցնող ու նոր կյանք տվող միակ առաջմղիչ զգացողությունը, որից փթթում է հոգին, ծաղիկը, խոտը, այգին, որտեղ կրկին Ադամն ու Եվան են ու՝

Նրանց համտեսած խնձորն
Ամեն սիրահար նորից է փորձում:

Կարոտը սիրո ու տառապանքի հաճելի ծնունդն է, հեռավորություն ու տարածություն հաղթահարած անհատի կամքը, բայց և ամենաքաղցրը.

Դու կարոտում ես ինձ:
Ես կարոտում եմ քեզ,
Ու մենք կարոտից չենք մեռնում,
Պարզապես ապրում ենք
Ամենքս
Իրար ունենալով:

Սա առաքինի կնոջ նվիրվածության բարձրակետն է, սեր զգացողության աստվածային լինելը՝ ստվերելով մարմնականը:

Ալիսա Բաղդասարյանի բանատողերում թևածում է սեր-կյանքը: Կանացի նուրբ հոգին յուրովի է ապրում անգամ բաժանման պահը՝ դրանով վերահաստատելով սիրո հավերժական լինելը.

Դու իմն ես, անկախ նրանից, որ իմը չես,
Ես շարունակում եմ
Իմ մենախոսությունը քեզ հետ...

Սիրո թևերն ունակ են նկարելու այնպիսի երկինք, ուր միավորվում են անգամ իրարից բաժան թռիչքները.

Մեր թևերը երկինք են նկարում,
Ուր և մենք վայելում ենք ամենահուզիչ թռիչքը՝
Իրարից հեռու:

Աշխարհը լցնել սիրո բառերով՝ սիրո դրախտում բնակեցնելով մարդուն. այս է բանաստեղծուհու սիրերգության առանցքը:

Պատերազմի գույները հաղթահարած արցախուհին նորից ու կրկին վերահաստատում է. սերն է ցավի ու տառապանքի միակ ապրեցնող ծնունդը, առաջ մղիչ ուժը:

ՌՈՒԶԱՆՆԱ ՍԱՅԻՅԱՆ

Բովանդակություն

ԹԵՎԱՎՈՐ ՊՈԵԶԻԱ 3

ՔԵԶ ՏԵՍՆԵԼԻՍ
ԵՐԳՈՒՄ ԵՆ ՀՈԳՈՒՍ ԱՉՔԵՐԸ

Սերը մտնում է հոգիներն 12
Տար ինձ 12
Դու մի նոր երանգ մտցրիր 13
Քո համբույրներից 14
Բառերն անզոր են 14
Կարոտի ցավը սեղմում է 15
Իմ կարոտը 16
Դու հավերժ իմն ես 17
Դու ես արևը, լուսինը 18
Երբ տեսա քեզ 18
Քեզնով ներծծված կարոտս 19
Քո բացակայությունը 19
Զգացմունքներս 20
Արդեն սովորում էի 21
Սերը գժություն է 21
Քեզ տեսնելիս 22
Ինձ ու քեզ բաժանող 22
Ուզում եմ բառերով լցնել 23
Առանց քեզ 23
Տխրությունդ 24
Կարոտը հիվանդություն չէ 25
Մենք, իրարից այնքան հեռու 26
Եվ քեզ հետ է դժվար 26
Ես՝ առանց քեզ 27
Հանկարծ հայտնաբերում եմ 27

Քո լռությամբ 27
Քո ընտրությունը..... 28
Գոյի տատանումների մեջ..... 28
Այսօրվա լուսաբացը 29
Երբ տեսնում եմ քեզ..... 30
Հիմա ես 30
Անզգացմունք ցուրտը.....31
Պահը՝ կարոտից արտասվում է 31
Գժվում ենք՝ իրարից հեռու 32
Քո՝ կատաղած կարոտն 32
Ձանձրույթից 32
Քեզ հետ մտնում եմ 33
Դու շարունակում ես լինել 33
Երբ տաք ջրից ու պղպջակներից..... 34
Ինչքան էլ ուզում եմ հրաժարվել քեզանից..... 34
Ամեն երեկո..... 35
Դու կարոտում ես ինձ 36
Օդը շնչահեղձ է լինում 36
Աշխարհի բոլոր սիրահարները..... 36
Հիշում եմ..... 37
Ժամանակը խելագարվել է 37
Լռությունդ մտնում է 38
Օրը մթնում է 38
Քեզնից հեռու..... 39
Անունդ պոկում եմ իմ մտքերից..... 39
Ոգևորիչ է 39
Զգում եմ 40
Թող բացազատվեմ 41
Աչքերս փակում եմ՝ դու ես 41
Զգացմունքներս հավաքել եմ 42
Սիրում եմ բառերով..... 42
Եթե մենք հրաժարվենք մեզանից 42

Շնչում եմ 43
Ուզում եմ 44
Մի նոր փակագիծ բացեցի 45
Դու սովորական օրվա պես 46
Բանաստեղծությունը ծնվեց 46

ԱՌԱՆՑ ՔԵԶ՝
ԵՐԿՆՔԻ ԿԱՊՈՒՅՏՆ ԷԼ ԱՆԳՈՒՅՆ Է

Ես սիրում եմ իմ կյանքը 49
Քամու մեջ զգում եմ 49
Օդում զգում եմ 49
Քո լռության մեջ 50
Շունչս 50
Գժվում է սպասումը 51
Ուզում եմ 51
Իմ հրաժեշտի մեջ 52
Զգացմունքների տարափից 52
Քամու բերած շշուկներդ 52
Քեզնով պարուրված մտքերս 53
Դու ու նորից դու 53
Ես քեզ գտա 53
Ես չգիտեի 54
Օրվա բոլոր ժամերին 54
Օրերն իրարից տարբերվում են 55
Քեզնից սկսվեց ամեն ինչ 55
Մոլորվել եմ 55
Երբ խաչվում են ճակատագրերը 56
Ամեն օր 56
Դու նորից անհասկանալի լուռ ես 57
Խոստովանում եմ 57
Կյանքն 58
Օրն արև էր նկարել 58
Հոտառությունից 59

Սերը հայտնվում է անսպասելի 59
Քեզ հանդիպած ճանապարհին 59
Ես չսովորեցի սիրել մարմնով 60
Պետք է պահպանել այն 60
Բառերը դառնում են 61
Համաձայնվիր 62
Թո՞ւյլ ես տալիս սիրել քեզ 63
Մենք կհանդիպենք 63
Մի՛ տխրիր, խելոքս 63
Այսօր ես բացում եմ 64
Ինձ պետք ես 64
Տարածությունը 64
Հրաժարվիր ինձանից 65
Հրաժեշտից առաջ ասացիր 65
Քեզ մոռանալու փորձերս 65
Հրաժարվել քեզանից 66
Օրվա դուռը ճռնչալով բացվում է 67
Ավելորդ բառերից 67
Խեղդվում եմ 68
Մարմնի և հոգու բացահայտումներում 68
Անտարբերությունը 69
Ների՛ր, բայց գնում եմ 69
Հեռանալուս բարբաջանքները 70
Կհանդիպենք 70
Մեր խոստովանություններից 71
Ազատ արձակիր ինձ 71
Երբ երևակայությունս սկսում է կաղել 71
Դռները բացվում են 72
Սերը 72
Դու քո ներկայությունը 73
Եթե իմ սիրտն ընտրել է քեզ 73
Հրաժարվում եմ քեզանից 74

Ամեն օր ես հրաժարվում եմ քեզանից 75
Կանգնի՛ր 76
Ոչ դու գիտես՝ ինչ է սերը, ոչ՝ ես 77
Ազատ եմ 78
Ես հրաժարվել եմ քեզանից 78
Քո անունը մշտապես իմ լեզվին է 79
Օրերն անցնում են 79
Նորից սկսում եմ զարմանալ 80
Երբ տեսնում եմ քեզ 80
Անցյալը 81
Արևը, լուսինը 81
«Միտքս ես եմ»,– ասում է Ժան-Պոլ Սարտրի 82

ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Պատերազմն ինձնից խլում է քեզ 85
Թևաթափ ընկել եմ վերքերիդ 85
Շունչս կտրվում է 87
Հողն արյունածոր 87
Պատերազմն իր սիրած գույնով ներկեց 88
Ուզում եմ քայլել 88
Արցախում 88
Պատերազմը ռումբ է 89
Հողը 89
Հայրենիք 90
Հայոց հողում 91
Բարձր գլխով ենք ընդունում 91
Քո գլխավերևի երկինքը 93
Արցախս 94
Պատերազմող երկրի քաղաքացին 95
Ռմբակոծված հայրենիք 95
Հրաժեշտի բոլոր բառերն 96
Այս պատերազմն 96

Օրերը հրաժեշտ են տալիս իրար 97
Տեր 98
Արյան մեջ թաթախված 98
Աղավնիները կարմիր են 99
Արյունաքամ իմ հայրենիք 99
Մտքերս ճամփորդում են 100
Արցունքներդ սրտիկ-սրտիկ 100
Տղան 101
Պատերազմը փոխել է 101
Ժամանակը 102
Կատարելագործված երազանքներս 102
Պատերազմը մտել է մեր ներսը 103
Ժամանակն օդում անտարբեր 103
Երկիրս վախվորած 104
Ես ինչ-որ մեկին հրաժեշտ եմ տալիս 104
Բացազատում եմ 105
Երկրիս հոգու զարկերում 105
Ամեն ինչ վերջացած չէ 106
Կորստի ցավը 106
Պատերազմի հոտը 107
Ոտքերը 107
Մահը ծաղր է 108
Ցավը.....109

ԿԵՆԴԱՆԻ ՌԻԹՄ 110

«ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՀԵՏՔԵՐՈՎ.....112

ՍԻՐՈ ՈՒԺԸ..... 118

ԱԼԻՍԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Խմբագիր՝

Սլավի-Ավիկ Հարությունյան

Սրբագրիչ ՝

Աստղիկ Վարդանյան

«ՎՄՎ-ՊՐԻՆՏ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Տպագրվել է «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատարակչության տպարանում
Հասցեն՝ Ազատության 24/11, հեռ. 28 54 28
E-mail: vmv_print@yahoo. com
www. vmv-print. am